

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ. «ՍՈՒՐԻԱԿԱՆ ԴՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՎ ԳԵՐԱԶՆՆՅԱԴՐԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ ՅԱՏԿԱՆՇՈՒՂ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՐԱԴՐԻՉՈՂ ԴԱՐՉԱՄ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր 2019-ին, Սուրիոյ Նախագահութեան կայքը վկայակոչելով Սուրիոյ Նախագահի Պաշտար ալ Ասատի հարցազրոյցը պաշտօնական կարգ մը լրատուամիջոցներու հետ, յայտնեց, որ Նախագահը պարզապէս է Սուրիոյ դերակատարութիւնը ՏԱՀԵՇ-ի ղեկավար Ապու Պաքր ալ Պաղտատիի սպանութեան մէջ:

Ան նաեւ անդրադարձած է քրտական հարցին, թուրք-ուսական հա-



մաճայնութեան շուրջ Դամասկոսի դիրքորոշման, ինչպէս նաեւ Թուրքիոյ հետ Նախագահ տեղի ունեցած կամ յառաջիկային ակնկալուող հանդիպումներուն:

Նախագահը յայտնած է, որ Սուրիոյ պատերազմի տարիներուն Ռուսիոյ մօտեցումները հիմնուած էին միջազգային օրէնքին, Սուրիոյ ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման վրայ, աւելցնելով, որ Ռուսիոյ կեցուածքը փոփոխութիւն չէ կրած, ռուս-թրքական համաձայնութիւնը ժամանակաւոր է եւ կարելի է գայն դրական քայլ համարել: Զայլ մը, որ թէեւ մեր բոլոր ակնկալիքները չ'իրականացներ, սակայն վնասները կը նուազեցնէ եւ մօտիկ ապագային տարածաշրջանը ազատագրելու ուղին կ'ուրուագծէ:

*«Ռուսիան թուրք-ամերիկեան համաձայնութեան մաս չի կազմեր: Ռուսական քաղաքականութեան մէջ անհասկնալի դիրքորոշումներ չկան, ինչ որ դրական կը համարենք»:*

Սուրիոյ Նախագահը խօսելով սուրիական ընկերութեան բաղադրիչներուն եւ պատերազմի տարիներուն անոնց ցուցաբերած կեցուածքին մասին, սուրիահայ համայնքը բաղդատած է սուրիական ընկերութեան այլ բաղադրիչներու հետ ու ըսած.

*«Ո՞վ էր այն վերջին բաղադրիչը, որ միացաւ սուրիական ընկերութեան հիւսուածքին: Հայութիւնն էր. հայութիւնը Նախ եւ առաջ հայրենասիրական մօտեցումով յատկանշուող օրինակելի բաղադրիչը դարձաւ սուրիական ընկերութեան: Այս ճշմարտութիւնը կտրականապէս փաստեց Սուրիոյ պատերազմը: Այս բաղադրիչը ունի իր սեփական միութիւնները, եկեղեցիները, մանաւանդ դպրոցները... Եթէ հայկական որեւէ տօնակատարութեան ներկայ ըլլաք, Նոյնիսկ հարսանիքի, - ես ունեցած եմ հայ բարեկամներ եւ ներկայ եղած եմ Նախագահի հայկական ծեռնարկներու, - պիտի տեսնէք, որ անոնք կ'երգեն ազգագրական երգեր, բայց աւարտին՝ անպայման հայրենասիրական, քաղաքական բնոյթ կրող երգեր: Անկէ աւելի ազատութիւն գոյութիւն ունի՞: Անելին ըսեմ՝ սուրիահայութիւնը, համեմատած աշխարհասփիռ հայութեան հետ, ամենէն քիչ ծովուող բաղադրիչն է այստեղ: Ան շաղախուեցաւ սուրիական ընկերութեան, սակայն պահպանեց իր իւրայատկութիւնները»:*

Նախագահը աւելցնելով ըսաւ. *« Ինչո՞ւ ուրեմն, այստեղ լայնամիտ ենք, այլ տեղ՝ չենք: Որովհետեւ այլ տեղեր անջատողական խմորումներ կան: Մենք հպարտ ենք սուրիական բազմերանգ ընկերութեամբ: Բազմազանութիւնը հարստութիւն է, ուժ է, բայց բազմազանութիւնը մէկ բան է, երկիրը քայքայելը՝ այլ բան: Մեր արդար իրաւունքն է պահպանել մեր երկիրն տարածքային ամբողջականութիւնն ու ժողովուրդին միասնութիւնը»:*

## ԿԱՄԱԽՐ, ԾԱՌԱՅՈՂ ՍԵՄ-ԱՎԱՆՆԵՐՈՒ ՓԱՂԱՆԳԸ ԿԸ ՅԻՇԱՏԱԿԷ ՄԻՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱԿԸ

Քառասուն տարիէ ի վեր Սուրիոյ Երիտասարդական Միութեան իրաւայաջորդ սերունդները, իրենց երդման հաւատարիմ, կը գործեն ժողովուրդին հետ, ժողովուրդին համար, որպէս կամաւոր, ծառայատէր երիտասարդներ: Այսօր անոնք հպարտութեամբ կը յիշատակեն իրենց միութեան 40-ամեակը:



Արդարեւ, Կիրակի, 3 Նոյեմբեր 2019-ին տեղի ունեցաւ ՍԵՄ-ի հիմնադրութեան 40-ամեակին նուիրուած հանդիսութիւնը: Ներկաները Նախքան հանդիսութիւնը վայելեցին ցուցահանդեսը, որ կը ներկայացնէր ՍԵՄ-ի 40 տարուան իրատարակութիւնները՝ պարբերաբերթեր, թերթօններ, օրացոյցներ, թղթապանակներ, շապիկներ եւ գլխարկներ, յուշանուէրներ, յուշադրոշներ, ծանուցումներ եւ յօդուածներ, որոնք լոյս տեսած էին Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ, ինչպէս նաեւ 1977-ին ՀՅԴ 21-րդ ընդհանուր ժողովով վաւերացուած գինանշանի մը պատկերը, որուն ներքեւ Սուրիոյ



Վեհան Պարսումեան  
 Շար.՝ Էջ 16



### ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Առաջնորդարանը կը փոխադրուի իր վերանորոգուած պաշտօնական կեդրոնը (Մալիպէ)

Չորեքշաբթի, 6 Նոյեմբեր 2019-էն սկսեալ:

Նալէպ, 2 Նոյ. 2019

Դիան  
 Ազգ. Առաջնորդարանի

Խմբագրական

ԱՌՈՂՋ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ,  
ՅՈՒՍԱԼԻՑ ԱՊԱԳԱՅ  
(ՍԵՄ-ի 40-ամեակին առիթով)

Սուրիոյ Երիտասարդական Միութեան 40-ամեակին առիթով, յետադարձ հայեացք մը նետելով միութեան քառասուն տարուան գործունէութեան, յատկապէս սփիւռքահայ Երիտասարդութեան կեանքին մէջ անոր ունեցած դերին ու ազդեցութեան համընդհանուր պատկերին վրայ, նախ մեծարելու ենք այն լուսաւոր դէմքերը, ՍԵՄ-ի հիմնադիրները, որոնք Երիտասարդութիւնը կազմակերպ շարքերու մէջ համախմբելու միտքը յղացան ու պատրաստեցին այն գաղափարական, դաստիարակչական հիմքը, որուն վրայ պիտի կառուցուէր ու թռչէր առնէր այս միութիւնը:

Այդ հիմքը կազմեցին միութեան ծրագիր-կանոնագիրն ու կազմակերպական աշխատանքի որակն ու եղանակը: Այս բոլորին վրայ աւելնալու եկաւ ընկերային այն ջերմ ու առողջ մթնոլորտը, որ տարուող աշխատանքին աւին եւ սեր ներարկեց:

Հայկական վարժարաններուն մէջ եթէ Երիտասարդ տարրը առիթ կ'ունենար ծանօթանալու հայ գիր ու գրականութեան, մասամբ մըն ալ հայոց պատմութեան, Երիտասարդական միութիւնը կու գար պատրաստելու ազգային մտածողութեամբ ու ազգին ծառայելու գիտակցութեամբ թրծուած հայ Երիտասարդը, զինք հեռու պահելով սփիւռքի ջլատող պայմաններու ազդեցութենէն, կարելոր դեր վստահելով անոր մեր հանրային կեանքի կազմակերպման մէջ:

ՍԵՄ-ի մէջ հայ Երիտասարդներուն առողջ դաստիարակութիւնը, ազգային մտածողութեան զարգացումը, - գիրքերուն ու դասախօսութիւններուն կողքին, - համալրելու կու գային հաւաքական գրոյցները, բանավեճերը, ասպակեղանացեալ աշխատանքի մէջ ձեւաւորուող նախաձեռնութեան ոգին, հաւաքական աշխատանքը յառաջ մղելու մատող ճիգերը, տակաւին ընկերային այն ջերմ ու անկեղծ յարաբերութիւնները, որոնք ամրակուռ ընտանիքի մը պիտի վերածէին ՍԵՄ-ը:

Ինչպէս կարելի էր պահել ազգ մը, կեանքի կոչել անոր իտեալները, եթէ գոյութիւն չունենային Երիտասարդութիւնը կազմակերպելու, անոր եական դեր վստահելու ճիգն ու հեռանկարը: Կրօնորական Երիտասարդութիւնը դիւրաւ կը յանձնուէր հոսկէ-հոսկէ փչող հոսանքներուն, անտէր թողով իր ժառանգութիւնը:

Աւելին. 70-ական թուականներէն սկսեալ ԶՅԴ Երիտասարդութեան քաղաքականացման ու յեղափոխականացման գործընթացը մարմին կ'առնէր ու կը զարգանար Երիտասարդական շարքերուն մէջ, եւ հայ Երիտասարդութիւնը մեծ դերակատարութիւն կը ստանձնէր պահանջատիրական մեր երթին մէջ, որպէս յանդուգն, ազգային ու քաղաքական մտածողութեամբ օժտուած տարր:

Հայաստանի վերանկախացումը, արցախեան ազատամարտը կամաւոր ծառայութեան ու նուիրումի արդէն իսկ պատրաստ Երիտասարդութեան դիմաց աշխատանքի նոր դաշտեր կը բանային՝ մասնակցելու, հոգիներ խանդավառելու, իրենց լուսման բերելու ազգային մեր իտեալներու իրականացման առաջնորդող այս փուլերուն:

Այս բոլորին կողքին նոյնքան կարելոր էր Երիտասարդ տարրին ինքնակերտումի աշխատանքը: Անոնց շարքերէն դուրս պիտի գային բժիշկներ, երկրաչափներ, իրաւաբաններ, արուեստագետներ ու արհեստաւորներ, որոնք պիտի դառնային Սփիւռքի գաղութներուն մէջ ծառայող ու նոր միտքեր, նոր գաղափարներ մուծող տարրեր, հաւասար պարտաւորութիւններով, կամաւոր աշխատանքի միեւնոյն յանձնառութեամբ:

Բանակումներ, դաստիարակչական ծրագիրներ, հրատարակչական աշխատանք, ազգային-յեղափոխական գրականութեան, հայոց պատմութեան ծանօթացում, տակաւին մարմնամարզի այլազան ծրագիրներ, ժողովուրդին ծառայելու, անոր պաշտպանը հանդիսանալու, պատերազմական պայմաններուն մէջ մարտական ոգիով անոր օգնութեան ձեռք երկարելու, հրդեհներ շիջանելու, վիրաւորներ փոխադրելու, ազգային կառոյցներուն հսկելու յանձնառութիւն:

Այսպիսի Երիտասարդութիւն կերտող դարբնոց մը եղած է ՍԵՄ-ը իրականութեան մէջ:

Ներկայ ժամանակներու մարտահրաւերները, ի տես այլասերիչ հոսանքներու սաստկացումին, կը պահանջեն աշխատանքի նոր ոճ, քննական միտքով, գիտութեամբ գերազանց մակարդակ նուաճող ու պայքարելու ժամանակակից միջոցներուն տիրապետող, ճկուն Երիտասարդութեան մասնակցութիւնը ազգային ու հանրային կեանքին, հեռու ազգայնամոլութեան ու նեղմտութեան հիւանդագին կաղապարներէն:

ՍԵՄ-ի շարքերը միշտ ալ հարուստ եղած են ազգային առողջ դաստիարակութեամբ տոգորուն Երիտասարդութեամբ, աշխատունակ տարրերը միշտ պատրաստ եղած են քայլ պահելու ժամանակին հետ, նոյնիսկ ժամանակէն առաջ անցնելու:

Կը մնայ այս եռանդն ու կորովը նոր որակ ու նոր ուժ կուտակելու ծառայեցնել եւ նոր սերունդները հաղորդակից պահել մեր ազգային ժառանգութեան, հայրենիքի ու Հայ Դատի իրամայականներուն:

Շնորհաւոր Ձեր 40-ամեակը, ՍԵՄ-ի պատմութիւնը կերտած, անոր ջանքերը միշտ վառ պահած, սերունդէ-սերունդ միութիւնը նոր շունչով ու եռանդով օժտած ազնիւ, գիտակից նուիրեալներ:

«Գ.»

-Զորքշարքի, 6 Նոյեմբերի առաւօտեան, ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծեցին Հալէպի Արդարադատութեան պալատը: Երկու հրթիռ ինկաւ պալատի յարակից տարածքին մէջ, որուն հետեւանքով վեց քաղաքացի վիրաւորուեցաւ:



Ժամեր անց, զինեալ ահաբեկչական խմբաւորումներ Հալէպի հիւսիսարեւմտեան շահրաաթաղամասը հրթիռակոծեցին:

Նախորդ շաբաթ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծած էին Հալէպի Նիլ պողոտայի տեղական շուկան, ուր արձանագրուած նիւթական վնասներուն կողքին կին մը վերաւորուած էր:

-Երկուշաբթի, 4 Նոյեմբեր 2019-ին, Ժընեւի մէջ, ՄԱԿ-ի կեդրոնէն ներս սուրիական սահմանադրութիւնը վերամշակող ընդլայնուած յանձնախումբէն ընտրուած փոքրաթիւ յանձնախումբին առաջին նիստը սկսաւ, մասնակցութեամբ սուրիական կառավարութիւնը ներկայացնող եւ այլ պատուիրակութիւններու:



ՄԱԿ-ի Ժընեւի թղթակիցը յայտնեց, որ այս յանձնախումբը կը բաղկանայ 45 անդամներէ, 15-ը սուրիական պետութեան կողմէ առաջադրուած անդամներ են, 15-ը՝ ընդդիմութեան ներկայացուցիչներ, իսկ 15-ը՝ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ:

Թղթակիցը աւելցուց, որ նիստին մանրամասնութիւնները լրատուամիջոցներուն պիտի չհաղորդուին:

Նիստը շարունակուեցաւ Երեքշաբթի եւ Զորքշաբթի օրերը:

Այս առիթով, ՄԱԿ-էն աղբիւրներ յայտնեցին, որ փոքրաթիւ յանձնախումբին ճշգրտ օրակարգը կ'ընդգրկէ սահմանադրութեան վերամշակման ընդլայնուած յանձնախումբի առաջարկներուն քննարկումն ու սահմանադրական օրէնքին լոյսին տակ հաստատումը:

-Երեքշաբթի, 5 Նոյեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ ականապատուած ինքնաշարժ մը պայթեցաւ հիւսիսային Ռաքքայի Թէլ Ապիատ աւանին մէջ, ուր կը գտնուին թրքական ուժերն ու իրենց պատկանող զինեալ ահաբեկչական խմբաւորումները:



Տեղական աղբիւրներ ՍԱՆԱ-ին յայտնեցին, որ պայթումին հետեւանքով արձանագրուած են վիրաւորներ եւ նիւթական բազմաթիւ վնասներ:

Յիշենք, որ նախորդ Շաբաթ՝ 2 Նոյեմբեր 2019-ին, Թէլ Ապիատի շուկային մէջ ականապատուած ինքնաշարժի մը պայթումին հետեւանքով քաղաքացի մը գոհուած էր եւ ուրիշներ վիրաւորուած էին:

-Սուրիական կառավարութիւնը կը ծրագրէ շարք մը միջոցներ որդեգրել 2020-ին երկրի տնտեսական ընդհանուր հատուածը բարելաւելու համար:

Կառավարութեան ծրագիրը կը ներառէ առաջը առնել մըսխումներուն եւ անոնց փոխարէն յառաջացնել այնպիսի շահաբեր ծրագիրներ, որոնք երկրին ծառայողական իրավիճակը կրնան բարելաւել:



Կառավարութիւնը կարելոր կը համարէ նաեւ վերջ տալ հարկեր խոյս տալու երեւոյթին՝ համապատասխան պատժամիջոցներ կամ տուրքեր սահմանելով:

-Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ֆերշտենըն մամլոյ ասուլիսի մը ընթացքին, մեկնաբանելով սուրիական քարիւղի հորերու շրջանին մէջ ամերիկեան ուժերու ներկայութիւնը ըսաւ, որ քարիւղի հանքերը սուրիացի ժողովուրդին ազգային հարստութիւնն են եւ միայն ժողովուրդը իրաւունք ունի գանձել օգտագործելու:



Ֆերշտենըն հաստատեց, որ Ռուսիա Սուրիոյ քարիւղի հորերուն առընչուած ԱՄՆ-ի դաւադրական ծրագիրներուն մաս պիտի չկազմէ:

Ան աւելցուց, որ Ռաշիսկթըն սուրիական քարիւղը ապօրինի կերպով երկրէն դուրս կը հանէ:

## Լուրեր Հայաշխարհին

### ՀԱՅԱՍՏԱՆ-ՅՈՒՆԱՍՏԱՆ-ԿԻՊՐՈՍ ԵՌԱԿՈՐԱ ՄՈՒՋԻՆ ՓԱՓԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍՈՒԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան նիստին հանդիպում ունեցած է պաշտօնական այցելութեամբ Հայաստան ժամանած Յունաստանի Հանրապետութեան նախագահ Փրոքոփիոս Փալուփոլոսի հետ:

Վարչապետը ողջունելով Յունաստանի նախագահը դիտել տուած է, որ անոր Հայաստան այցելութիւնը կը նպաստէ հայ-յունական եղբայրական կապերու զարգացման ու ընդլայնումին:

Փրոքոփիոս Փալուփոլոս շնորհակալութիւն յայտնած է վարչապետին շերմ ընդունելութեան համար եւ ըսած է. «Մենք յատկապէս կ'ողջունենք Հայաստանի եւ հայ ժողովուրդին կողմէ գործադրուած այն ջանքերը, որոնք ուղղուած են Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման: Մաշտ կարեւոր քայլ է, եւ մենք մեր աջակցութիւնը կը ցուցաբերենք այդ հարցին: Միւս կողմէ, շատ ուրախ եմ, որ այդ պայքարով Հայաստան ճանաչած է յոյներու եւ ասորիներու ցեղասպանութիւնը: Միեւնոյն ժամանակ կ'ողջունենք եւ կ'ուրախանանք, որ վերջերս Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու պալատը ճանաչեց Հայոց Յեղասպանութիւնը, որ շատ կարեւոր է: Մենք վրեժխնդրութեան համար չենք պայքարիր: Մենք կը պայքարինք որ այլեւս երբեք չկրկնուին նմանատիպ յանցագործութիւնները եւ ոճրագործութիւնները:



Շատ ուրախ եմ եւ կ'ողջունեմ եռակողմ այն գործակցութիւնը, որ գոյութիւն ունի Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի միջեւ: Հանդիպումներ պետք է տեղի ունենան արտաքին գործոց նախարարներու, ինչպէս նաեւ երկիրներու ղեկավարներու մակարդակով: Վստահ եմ, որ եռակողմ գործակցութիւնը ոչ միայն օգուտ կրնայ բերել եւ արդիւնաւետ կրնայ ըլլալ իւրաքանչիւր երկրի համար, այլեւ ընդհանրապէս Հայաստանի՝ եւրոպական Միութեան հետ գործակցութեան համար»:

Կողմերը միտքեր փոխանակած են նաեւ տարածաշրջանային հարցերու շուրջ եւ կարեւոր համարած են Հայաստան-Յունաստան-Կիպրոս եռակողմ գործակցութիւնը՝ մարտահրաւերները միասնականօրէն դիմագրաւելու եւ ընդհանուր շահերը պաշտպանելու առումով:

### ԻՇԽԱՆ ՍԱՐԱԹԵԼԵԱՆ «ԱՏՐՊԷՅԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀԱՄԱՐ ԶԵՌՆՏՈՒ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԶԻ ԿՐՆԱՐ ԶԵՌՆՏՈՒ ԸԼԼԱԼ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ»

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ինդոնազիոն կը համարէ Փաշինեանի այն յայտարարութիւնը, ըստ որուն Արցախի հարցը պետք է հանրաքուէի միջոցով լուծել:

ՀՀԴ Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սարաթելեան «Փաստինֆօ»-ին հետ ունեցած զրոյցին ընթացքին ըսաւ. «Մենք բազմիցս յայտարարած ենք, որ ժողովուրդը այդ հովանաւորութիւնը տուած է իշխանութիւններուն եւ անոնք պետք է պատուով կարենան այդ հարցը յառաջ մղել: Կրնա՞յ ըլլալ հանրաքուէի ինչ-որ տարբերակ կամ նախագիծ կայ, որով տեղեակ չենք»:

Յիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան 3 Նոյեմբերին դիմա տետրի ուղիղ սփռումով անդադարած էր Արցախի հիմնահարցի կարգաւորման: Ան յայտնած էր, որ իր հիմնական հարցը բանակցային սեղանի շուրջ փնտռելն ու գտնելն է Հայաստանին եւ հայ ժողովուրդին համար ընդունելի լուծումը:

«Երբ բանակցային գործընթացով պիտի ձեւակերպուի այնպիսի լուծում, այնպիսի առաջարկ, գոր կարելի է համարել, որ ընդունելի պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար, այդ առաջարկը պիտի ներկայացնենք ժողովուրդին, անոր շուրջ համազգային քննարկում պիտի կատարենք եւ որոշումները պիտի գոյանան համազգային չափանիշով», շեշտած էր վարչապետը:

Եգրափակելով վարչապետը յայտնած էր, որ Արցախի հարցի կարգաւորման շուրջ Արցախի եւ Հայաստանի իշխանութեանց պատկերացումները նոյնանման են:

Երբ հարց տրուեցաւ, թէ չէ՞ք կարծեր, որ ժողովուրդը իր տեսակետը արդէն յայտնած է Անկախութեան հռչակագիրով, Սարաթելեան պատասխանեց. «Այո, ժողովուրդը իր տեսակետը արտայայտած է Անկախութեան հռչակագիրով, որ ամրագրուած է Արցախի Սահմանադրութեամբ, իր տեսակետը յայտնած է իր որդիներու արեան գինով, հայրենիքը ազատագրելով: Զի կրնար Հայաստանի մէջ այլ տեսակետ գոյութիւն ունենալ, քննարկուիլ, հանրաքուէի դրուիլ»:



ՀՀԴ Գերագոյն Մարմինի ներկայացուցիչի խօսքին համաձայն, Արցախի հարցով հանրաքուէ իրականացնելը անհեռատեսութիւն ու անլրջութիւն է. «Այսինքն նոր պետք է հասկնանք, թէ մեր ժողովուրդը ինչ տեսակետ ունի Արցախեան հարցին մասին: ՀՀ իշխանութիւնները ամբողջական պատասխանատուութիւն կը կրեն հայ ժողովուրդին, Արցախի ժողովուրդին ու արցախեան բանակցութիւններուն հարցով: Ժողովուրդը տուած է հովանաւորութիւնը, անոնք պատասխանատուութիւն կը կրեն»:

Սարաթելեան ըսաւ, որ մտահոգի է այն հարցը թէ ի՞նչը կ'ուզեն հանրաքուէի դնել. «Այսինքն կա՞յ այլ տարբերակ, որ հանրաքուէի դրուի»:

Պատասխանելով այն հարցումին թէ Կրնա՞յ գոյութիւն ունենալ տարբերակ մը, որ ձեռնտու ըլլայ եւ՝ Հայաստանի, եւ՝ Արցախի, եւ՝ Ատրպեյձանի համար, ՀՀԴ ԳՄ ներկայացուցիչը ըսաւ. «Ատրպեյձանի ժողովուրդին համար ձեռնտու տարբերակը չի կրնար ձեռնտու ըլլալ նաեւ հայերուն համար»:

### ՀՀԴ ՀԵՄ-Ը ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԿԸ ՊԱՀԱՆՅԷ

Երկուշաբթի, 4 Նոյեմբերին, ՀՀԴ Հայաստանի Երիտասարդական Միութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը, պահանջելով Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը՝ կառավարութեան 7 Նոյեմբերի նիստին:

Յայտարարութեան մէջ անդրադարձ կատարուեցաւ այն պատճառներուն, որուն լոյսին տակ միութիւնը այս պահանջը կը ներկայացնէ:

«Իր պաշտօնավարման ընթացքին Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի կողմէ՝

- դպրոցական ծրագիրէն հայոց եկեղեցւոյ պատմութիւն նիւթին դուրս բերումը,


- Համալսարանական ծրագիրին մէջ «Հայոց լեզու», «Հայ գրականութիւն» եւ «Հայոց պատմութիւն» նիւթերը ոչ-պարտադիր դարձնելու առաջարկը,

- կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան կողմէ յատկացուող նիւթական յատկացումներու առաջնահերթութիւնները (օրինակ՝ Հայաստանի Հանրապետութեան արտագաղթած, օտար պետութիւն ապաստան հայցած եւ սեռափոխ եղած անձի մասին ժապաւէտի նկարահանման նպատակով 20 միլիոն դրամի յատկացումը),

- նիւթին շուրջ տրուած հարցազրոյցներն ու մեկնաբանութիւնները փաստել են, որոնք կը խօսին նախարարին՝ մեր հայկական ինքնութեան հիմքը կազմող ազգային արժեքներու նկատմամբ ունեցած անպատշաճ, յաճախ անյարիր ու անթաքոյց հեգնական վերաբերմունքին մասին», կը յիշուի յայտարարութեան մէջ:

Առ այդ, ՀՀԴ Հայաստանի Երիտասարդական Միութիւնը անթոյլատրելի կը նկատէ սեփական հայրենիքի պատմութեան եւ սեփական ժողովուրդի երկրէն հիմք հանդիսացող արժեքներուն նկատմամբ նախարար Արայիկ Յարութիւնեանի նման վերաբերմունքը եւ կը պահանջէ անոր հրաժարականը:

«Արայիկ Յարութիւնեանի պաշտօնավարման շարունակութիւնը վտանգի տակ կը դնէ հայկական կրթական համակարգի, հայկական գիտութեան, հայկական մշակոյթի եւ հայկական մարմնակրթութեան ապագան, ուստի մեր հետագայ քայլերը պիտի բխին այս տրամաբանութենէն», կ'եզրափակէ յայտարարութիւնը:



Երկուշաբթի, 4 Նոյեմբերին, ՀՀԴ Հայաստանի Երիտասարդական Միութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը, պահանջելով Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը՝ կառավարութեան 7 Նոյեմբերի նիստին:

Հարձակո՞ւյթ

ՅԱԿՈՒ ՔԻԼԵՆԱՆ. «ՍՈՒՐԻԱՆ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆԳԱՆԻ, ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԱՆՈՒՄԸ, ԱՆԿԱՅԻՆ, ԿՈ ՊԱՇՏՆԱԳԷ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԻԳ ԵՒ ՆԵՐՊՐՈՒՄ»

Հայաստանեան «Երկիր Մետիա» պատկերասփիւռի կայանը հարցազրոյց մը ունեցաւ Հալէպի Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի տնօրէն Յակոբ Քիլեճեանի հետ:

Ստորեւ կը ներկայացնենք հարցազրոյցը.

**Հ. - Սուրիոյ նախագահը սուրիական պատկերասփիւռի կայաններուն տուած իր հարցազրոյցին ընթացքին խօսած էր սուրիահայրութեան մասին ներկայացնելով որ վերջինները երբեք չեն ձուլուած եւ դարձած են երկրին մէկ մասնիկը, կ'ուզէի այդ հարցազրոյցէն սկսիլ նաեւ մեր հարցազրոյցը:**

**Յակոբ Քիլեճեան.** Սուրիոյ նախագահ Պաշշար ալ Ասատը յաճախ արտայայտուած է հայերու մասին, սակայն այս վերջին արտայայտութիւնը շատ յստակ ձեւով բնորոշեց հայութիւնը: Սուրիոյ մէջ մենք պատմական ներկայութիւն ենք, սակայն ցեղասպանութենէն ետք հայերը կայք հաստատած են Սուրիոյ մէջ եւ ոչինչէն կրցած են ունենալ այն ինչ որ ներկայիս ունին, այն բոլոր արժէքները եւ հարստութիւնները: Անոնք մեծ դերակատարութիւն ունենին Սուրիոյ վերականգնումի եւ գարգացման գործընթացին մէջ: Մենք պատմութեան ընթացքին միշտ եղած ենք պետականութեան հետ, միշտ պաշտպանած ենք Սուրիոյ սահմանները: Շատ ճիշդ բնորոշեց նախագահը, սուրիահայերը եղած են Սուրիոյ լիիրա քաղաքացի, իրենց բոլոր պարտականութիւնները կատարած են, սակայն պահած են իրենց իւրայատկութիւնը, ունեցած են իրենց մշակոյթը, եկեղեցիները, հայկական դպրոցները, ուր դասաւանդած են հայերէնն ու կրօնը: Այս բոլորին շնորհիւ անոնք չեն ձուլուած արաբ ժողովուրդին մէջ եւ պահած են իրենց իւրայատկութիւնը, համարուելով սուրիական ընկերութեան եւ մնալով սուրիացի պարկեշտ քաղաքացիներ:

**Հ. - Այսօր Սուրիոյ իրավիճակը, համեմատաբար նախորդ տարիներուն, աւելի խաղաղ է եւ երկիրը կամաց-կամաց կը փորձէ ուղղել իր ծածկ մէջը: Ինչպիսի՞ իրավիճակի մէջ են հիմա հայաշատ քաղաքները եւ թաղամասերը: Արդեօ՞ք դժուարութիւնները անյաղթահարելի են:**

**Յ.Բ. -** Սուրիոյ տագնապին սկիզբը՝ 2011-ին ժողովուրդին մէկ հատուածը պարզապէս կ'ուզէր իր վիճակը բարելաւել, ապրուստը բարելաւել, սակայն ի յայտ եկաւ որ այդ շարժումը միայն ժողովուրդին պարզ պահանջներուն հետեւանքով ձեւուող չէր առած, այլ կային արտաքին ուժեր, որոնք ուզեցին այդ բարեկարգումներու պահանջին այլ երանգ մը տալ եւ յստակ էր, որ վերջին ուղղիւն տարուան ընթացքին ինչպիսի միջամտութիւններ եղան կարգ մը պետութիւններու կողմէ: Անշուշտ Հալէպը 2012-ի Յուլի-

սին եղաւ զինեալ խմբաւորումներուն թիրախը եւ հայահոծ շրջաններն ու թաղամասերը ռմբակոծուեցան: Մեծ թիւով սուրիահայեր եւ մանաւանդ հալէպահայեր գաղթեցին Հալէպէն, սակայն այսօր 2016-էն ետք, երբ սուրիական բանակը ազատագրել սկսաւ Սուրիոյ արեւել-



եան բաժինը, ապահովական իմաստով Հալէպ քաղաքը բաւական լաւ վիճակի մէջ յայտնուեցաւ: Հալէպի հիւսիսարեւմտեան արուարձաններուն մէջ տակաւին կան զինեալ խմբաւորումներ, որոնք մերթ քան մերթ հրթիռներ կ'արձակեն եւ Սուրիոյ քաղաքացիները կը գողտնեն, սակայն այդ շրջաններուն մօտակայքը հայեր չեն բնակիր, հետեւաբար կրնան ըսել որ Հալէպի վիճակը ապահովական իմաստով աւելի լաւ է:

Դամասկոսի վիճակն ալ վերջին երկու տարիներուն բարելաւուած է: Ներկայիս մտահոգ ենք Գամիշլիի եւ ընդհանրապէս Սուրիոյ Հիւսիսարեւելեան շրջաններու բնակչութեան ապահովութեան հարցով, որովհետեւ թրջական գօրքը եւ թրջամետ զինեալ խմբաւորումներ արդէն Սուրիոյ հիւսիսային սահմանին վրայ թէլ Ապիատէն մինչեւ Ռաս ուլ Այն ներխուժած են: Բարեբախտաբար Սուրիոյ կառավարութիւնը քիւրտերու հետ բանակցելով, ռուսական կողմին միջնորդութեամբ կրցաւ համաձայնութեան հասնիլ: Մեր բոլորին փափաքն է, որ սուրիական բանակը տարածուի այնտեղ եւ պահպանէ սահմանը: Փառք Տիրոջ, մինչեւ օրս մենք Գամիշլիի մէջ ապահովական ոչ մէկ հարց ունեցած ենք, վիճակը այնտեղ բաւական կայուն է ներկայիս: Յուսանք տարածաշրջանային եւ միջազգային համաձայնութիւնները, քաղաքական գործընթացը դրական աւարտ կ'ունենան:

**Հ. - Սուրիահայ երիտասարդութեան վիճակը ի՞նչ է այս օրերուն:**

**Յ.Բ. -** Երիտասարդներուն հիմնական դժուարութիւնը, յատկապէս համալսարանականներուն, ուսման աւարտէն ետք զինուորական ծառայութեան եւ աշխատանքի ու համապատասխան վարձատրութեան դժուարութիւններն են: Պատերազմէն տակաւ դուրս եկող երկրի մը այս դժուարութիւններն են, որոնք երիտասարդները գաղթի կը մղեն:

**Հ. - Կրթական համակարգի հետ կապուած դժուարութիւններ կա՞ն:**

**Յ.Բ. -** Կրթական համակարգը կարելորագոյն համակարգերէն մէկն է: Վերականգնումի աշխատանքները կը սկսին այդտեղէն: Բարեբախտաբար կրթական հաստատութիւնները Հալէպի մէջ իրենց ընթացքը կը շարունակեն: Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի աշակերտութիւնը արդէն 2017-ին վերադարձաւ իր ակունքը՝ իր շէնքը, այսօր երրորդ տարին ըլլալով դասաւանդութիւնը կը շարունակուի Ճեմարանի կառոյցէն ներս: Անշուշտ աշակերտութեան թիւի նօսրացում տեղի ունեցաւ: Մենք փորձեցինք վերանորոգել այն ինչ որ պատերազմի օրերուն քանդուած էր եւ ուսման բոլոր կարելիութիւնները ապահովել:

**Հ. - Կրթական համակարգին կրած վնասները մե՞ծ էին:**

**Յ.Բ. -** Մեծագոյն վնասը կրեցին Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանը եւ Կիլիկեան ճեմարանը, սակայն երկու դպրոցներն ալ այսօր վերականգնած են իրենց կառոյցները եւ աշակերտները ընդունած են նորագուած շէնքերուն մէջ:

**Հ. - Ի՞նչ դժուարութիւններ կան, որոնք յաղթահարելու պարագային կեանքը կը բարելաւուի:**

**Յ.Բ. -** Ներկայիս հիմնական դժուարութիւնը տնտեսական ճգնաժամային վիճակն է, որովհետեւ վերջին մէկուկէ տարուան ընթացքին ԱՄՆ միակողմանի տնտեսական պատժամիջոցներ սահմանեց Սուրիոյ վրայ: Իրականութեան մէջ Սուրիոյ ժողովուրդն է, որ կը կրէ անոնց հետեւանքը, իր օրապահիկը դժուարութեամբ կ'ապահովէ: Սղաճը այլ հարց մըն է Պարզ բանուորին կամ պաշտօնեային ամսականը եթէ նախապատերազմէն շրջանին հինգ-վեց հարիւր տոլար էր, ան կը բաւարարուէր: Ներկայիս, սակայն, միջին ամսականները կը հասնին մօտաւորապէս հարիւր տոլարի: Ասիկա լաւագոյն պարագային: Այս եկամուտը բաւարար չէ ընտանիք մը պահելու համար, ինչ որ շատ մը երիտասարդներ կը մղէ, որ մտածեն տարբեր լուծումներու մասին, ինչպէս օրինակ գաղթի մասին:

**Հ. - Գաղթողներու թիւը մե՞ծ է վերջին երկու տարուան ընթացքին:**

**Յ.Բ. -** Թիւերու մասին չեմ կըրնար խօսիլ, որովհետեւ յստակ տուեալներ չկան, սակայն կը կարծեմ որ վերջին երկու տարիներուն ընթացքին, արտահոսքը նուազած է: Այդ մէկը կրնանք գուշակել դպրոցի աշակերտներուն թուապատկերէն: Վերջին մէկ-երկու տարիներուն անոնց թիւը մեծ փոփոխութիւն չէ կրած: Յոյսով ենք, որ երբ մանա-

ւանդ Հալէպ-Դամասկոս մայրուղին բացուի, Հալէպի օդակայանը վերըստին բանի, տնտեսական վիճակն ալ կը բարելաւուի, յատկապէս երբ նկատի ունենանք, որ վերջերս սուրիական բանակը Սուրիոյ քարիւղի հանքերը իր վերահսկողութեան տակ առաւ:

**Հ. - Մենք կը խօսինք ժողովուրդի տնտեսական վիճակի բարելաւման մասին, իսկ ժողովուրդին հոգեկա՞ն վիճակը...:**

**Յ.Բ. -** Ժողովուրդը տակաւին չէ թօթափած հոգեկան իր ճնշուած վիճակը: Մենք կը փորձենք գոնէ դրպրոցներուն մէջ այդ հարցերը լուծել, հոգեբանական խորհրդատուներու դիմելով: Յուսանք այս դժուարութիւնն ալ յաղթահարելի կը դառնայ, մանաւանդ երբ տնտեսական վիճակը բարելաւուի:

**Հ. - Վարժարաններուն մէջ տարբեր առարկաներու յատուկ մասնագետներու բաց ունի՞ք:**

**Յ.Բ. -** Այս իմաստով, կը կարծեմ, գէթ ճեմարանի մեր կազմը բաւական լաւ է: Մասնագետներ կան, աշխատանքը լրջութեամբ կ'ընթանայ: Վերջին ուսումնական տարեշրջանին մենք ունեցանք շատ լաւ արդիւնքներ: Վեց շրջանաւարտներ Բժշկական Համալսարան արձանագրուեցան եւ տասնեակ աշակերտներ Հալէպի տարբեր համալսարաններ: Շրջանաւարտներու 95 առ հարիւրը արդէն համալսարանական ուսման փուլ թեւակոխած է: Ոմանք նախընտրեցին իրենց ուսումը շարունակել Հայաստանի մէջ կամ այլուր:

**Հ. - Հայաստանէն Սուրիա վերադարձողներ կա՞ն:**

**Յ.Բ. -** Այո, անցեալ ուսումնական տարեշրջանին ունեցանք երեք-չորս աշակերտներ, որոնք վերադարձան եւ այսօր իրենց ուսումնական ընթացքը ճեմարանի մէջ կը շարունակեն: Ոմանք կ'ուզեն գաղթել եւ իրենց ուսումը այլ երկիրներու մէջ շարունակել: Մենք նման շրջանաւարտներու կը թելադրենք մեկնիլ Հայաստան եւ այնտեղ շարունակել իրենց բարձրագոյն ուսումը:

**Հ. - Այսօր, երբ կը կարծեք, թէ երկիրը աստիճանաբար կը վերականգնի, ինչպիսի՞ հարցեր պետք է լուծել կեանքը աւելի դիւրին դարձնելու համար:**

**Պ. -** Ներկայիս կը վերագնահատենք մեր ուժերը, յատկապէս մարդու: Անհրաժեշտ է որոշ աշխատանքներ ամփոփել, ամփոփուիլ: Ծրագիրներ պետք է մշակենք հասութեամբ արդիւնքներ ապահովելու, որպէսզի կարենանք մեր տնտեսական դժուարութիւնները յաղթահարել, յատկապէս նկատի առած որ

**Հարցազրոյցը վարեց Էտկար Պաղտասարեան**  
Շաբ.՝ էջ 14 ➤

Ակնարկ

ԲԱՅԱՌԵԼՈՒ ԶԱՄԱՐ ԻՆՔՆԱԶԱՐՈՒԱԾԸ

Բնականաբար վարչապետի ել կառավարության հրաժարականով պիտի չափարար լինի...

մեկնարկներու յայտարարութիւններ կատարող բովանդակութեամբ: Այստեղ յայտնաբար հանգրուանային է մօտեցումը...



Կենցաղային տարրական խնդիրներն քաղաքացիական պահանջներ, ընկերային-տրնտեսականն անցում քաղաքական թիրախներու ել ապա ամբողջ համակարգի վերափոխման նպատակի ձեւաւորում՝ շարժումի հետապնդած խնդիրներու ամբողջութիւն մը կ'ուրուագծեն:

Տարերայինն էն դէպի ընկերային ցանցերու վրայ բողոքի գործողութիւններու ժամանակացոյցի ել տեղերու ճշդում. ճանապարհներու փակումն էն դէպի հանրահաւաքներ, անցնելով մարդկային շղթայ կազմելու գանգուածային մասնակցութենէն՝ շարժումը իբրեւ ոճ ել բովանդակութիւն կը թելա կոխէ իրարայաջ ռոք փուլեր:

թիւնը բացառելու: Գետնի վրայ ո՛չ բանակայիններու կամ ոստիկաններու միջամտութիւնները ել ոչ ալ անոնց նկատմամբ ցուցարարներու պահուածքը բռնութեամբ չեն յատկանշուիր, ինչ որ անկախ քաղաքական մեկնաբանութիւններէն երեւութապէս քաղաքակիրթ ոճի նոր աստիճանաչափ կ'ապահովէն Լիբանանին:

Կայ անշուշտ, համակարգային վերափոխման վերաբերող հիմնական առաջադրանքի գործնականացման մշուշոտ պատկերացումներու հանգոյցը: Զամայնքային համակարգի վերացումը նախ ել առաջ կ'ենթադրէ թուային ժողովրդավարութեան տիրապետում: Պարզ չէ, թէ ի՞նչ կարգավիճակներու համար կը ջնջուին համայնքի իւրայատկութիւններու նկատառումով ճշդուած չափաբաժինները: Առանց խորանալու մանրամասնութիւններուն մէջ պարզապէս պետք է նկատել, որ թուային ժողովրդավարութիւնը մէկ կողմէ կը վերացնէ միջհամայնքային խնդիրներու պատճառով պետութեան շատ մը գործունէութիւններու անդամալուծման երեւոյթը, միւս կողմէ սակայն, կրնայ համահարթեցնել պետական հաստատութիւնները մեծագոյն համայնքներու աներկբայ տիրապետումով: Զաղաքացիական պետութեան անցումը հետեւաբար բանակցային նրբանկատ ել ժամանակ ենթադրող քաղաքական աշխատանք է, որպէսզի ապահամայնքային ցանցման կարգախոսին տակ չբանկի համահարթեցումը:

Ինչպէս որ առաջադրանքներու բարձրաձայնումն ու անոնց իրականացումը հանգրուանային գործողութիւններու շարք են, այնպէս նաեւ իւրաքանչիւր քաղաքական բեկումնային նոր որոշում պիտի ունենայ իր գործադրութեան ենթահանգրուանային ճանապարհը: Կ'ակնկալուին իշխանութիւններու

Առաջադրանքային առումով կը թուի, թէ վարչապետի ել կառավարութեան հրաժարականին յաջորդած է արդէն ապակուսակցական սեղմ կառավարութեան կազմութեան պահանջը՝ մասնագէտներէ բաղկացած դահլիճի հրամայականի տեսքով: Այստեղ բնականաբար չեն աւարտիր շարժումին հետապնդած նպատակները: Կը յաջորդէ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու պահանջը, որմէ ետք՝ դատական իշխանութիւններու անկախացումը, բանաձեւելու համար ենթապահանջները՝ թալանի հաշուետուութիւն, թալանուածի պետական պիւտճէ վերադարձի եղանակի ճշդում, ապա՝ բարեկարգման ծրագիրներու գործնականացում. այս բոլորը՝ յանգելու համար պետական համայնքային համակարգի վերափոխումին ել քաղաքացիական պետութիւն հիմնելու հրամայականին:

Պետք է արձանագրել, որ այս բոլոր հիմնադրոյթները ներառուած էին նախագահի ուղերձին մէջ: Կը թուի սակայն, որ փողոցի ճնշամիջոցը վառ պահելը որդեգրուած է իբրեւ մարտավարութիւն՝ փուլերու թեւակոխումը արագ ապահովելու համար:

Բողոքարկու գանգուածին անուկով պահանջներ ներկայացնելու որեւէ մարմին կամ յանձնախումբ գէթ պաշտօնապէս չէ կազմուած դեռ: Չուգահեռ սակայն, վիրթուալ տարածքներու վրայ կը հրապարակուին «Յեղափոխութեան համակարգումի խորհուրդ»ի հաղորդագրութիւնները՝ առաւելաբար բողոքի գործողութիւններու ժամանակին, վայրին կամ գործադուլի

ՏԱՐԱՆՁԱՏ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յօդակ Աշրգեստ

ՄՇԱԿՈՅԹԸ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՅԵՆԱՐԱՆ Միասնութեան Դիմըը Մշակոյթն է


Ներանձնական հայեացք

Կը մտաբերեմ կեանքիս յուշերը՝ ամենէն ուրախ պահերը մանկութեանս, ամենէն հաճելի ժամանակները, որ պատանեկութիւնս հարըստացուցած են, աւելի հասուն տարիքի դժուարութիւններս, բոլոր այն սովորական ել անվրէպ պահերը, կեանքիս ամենէն կարեւոր իրադարձութիւններն ու փուլերը՝ մանրամասնութիւններով, տարբեր գոյներով ու դերակատարներով, տեսակ-տեսակ վայրերով ել միջավայրերով: Այդ բոլորը շունչ ել հնչին ստացած են, լսելի ել արտայայտելի դարձած են, մեղեդիի նման հոսած են ել հարագատութիւնս պարգեւած՝ մայրենի լեզուիս շնորհիւ: Զընչեղ արեւմտահայերէնս՝ իր իւրայատկութեամբ, մեծ ժառանգութեամբ, անբացատրելիորէն սրտիս մօտիկ ու հարուստ ոգեղէն պաշարով:

000

Իրադրական կացութիւն

Վերջերս շատ կը խօսուի արեւմտահայերէնի ել արեւելահայերէնի մէջ նոյն բառերը տարբեր իմաստներով գործածելու մասին: Այս երեւոյթին պատմական պատճառները բոլորին յայտնի են: Բայց արդեօք աւելի քան քսանութ տարիները բաւարար չէի՞ն Զայաստանի Զանրապետութեան ել



Սփիւռքի (արեւմտահայեր) միջեւ լեզուական մակարդակի անհարթութիւնները հարթելու: Երկար չտեւէ՞ց այս «հասկցուելու» ընթացքը:

Գիտե՞ք որ 70 տարի Զայաստանի Զանրապետութեան կապերը խզուած էին ցեղասպանութեան հետեւանքով կազմուած դասական Սփիւռքին ել ընդհանրապէս արտաքին աշխարհին հետ: Բայց այդ խոչընդոտը այլեւս գոյութիւն չունի. Զայաստանի Զանրապետութիւնը անկախ է:

Զայաստանի մէջ պատահած վերջին փոփոխութիւններու ալիքը ել իշխանափոխութեան հետեւանքով ստեղծուած իրավիճակը շատերուն այն յոյսը ներշնչեցին, որ շատ մը հարցեր պիտի լուծուին, պիտի բարելաւուին նաեւ Սփիւռքի հետ յարաբերութիւնները: Ներկայ կացութեամբ, սակայն, շատ շատերու համար արդարացուած չեն կատարուած աշխատանքները: Ընդհակառակը. աւելի քան մտահոգիչ երեւոյթներու ակնատես կ'ըլլանք: Զաղաքական սխալ մարտավարութիւն մըն էր օրինակի համար իշխանութեան կողմէ հասարակութեան մէջ բաժանարար գիծեր որոնելու ել «ստեղծելու» ոճը: Ընթացք մը, որ շարունակական բնոյթ ստացած է ել զայն անտեսելը կամ թերագնահատելը խոհեմութիւն չի նկատուիր կարգ մը քաղաքական ուժերու կարծիքով:

Ճիշդ է որ պետական անձնաւորութիւններու կողմէ գանազան ամպիոններէ հնչեցին միասնութիւնը շատագոյնով ելոյթներ, միասնականութիւն «ձեւացնելու» համար ոտանաւորներ ալ արտասանուեցան, սակայն ոչ մէկ գործնական քայլ, նոր առաջարկութիւն, ծրագիրի մշակում, առաջնահերթութիւններու ճշդում տեղի ունեցաւ մեր ժողովրդի գաւակներուն միասնականութիւնը ամրապնդելու առումով: Սփիւռք-Զայաստան կապը ամրապնդուելու փոխարէն առաւել թուլցաւ Սփիւռքի Նախարարութեան լուծարումով, իսկ վերջերս պետական պաշտօնական մակարդակով կ'առնուին որոշումներ, որոնք միայն կը նպաստեն արժեզրկելու Զայ Լեզուի ել Զայոց պատմութեան կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը Զայաստանի կրթական կառոյցներէն ներս: Նման քայլեր աւելի հաւանական է, որ դատապարտուին ձախողութեան: Պետք է յուսալ, որ նման կեղծ ու վնասակար օրակարգեր առաջ տանողները կը զգաստանան ել աւելի մտածուած ծրագիրներ կ'որդեգրեն, ել կամ այլապէս կը հեռացուին պաշտօններէ, երբ չեն իրականացնել հայ մարդու կամքին համաձայն գործունէութիւն:

000

Մշակութային յենարանը՝ ելակետ

Այս գրութեան ելակետը շատ պարզ է ել յստակ: Պետք է ձեռքբազատիլ բոլոր պարտադրուած բաժանարար երեւոյթներէն: Ապա ծրագրել ել ձեռնարկել աւելի նպատակադրուած համահայկական մշակութային ծրագիր, տարբեր բնագաւառներու գարգացումով՝ թատրոն, երգարուեստ, գրականութիւն ել կրթութիւն, Զայաստանը բոլոր հայ երիտասարդներուն համար վերածելու կրթական հիմնական օճախի:

Այդ ճամբուն վրայ առաջին քայլը միասնական Մեսրոպեան մշակուած ուղղագրութեան վերահաստատումը պետք է ըլլայ: (Մանրամասնութիւնները մասնագէտներու գործ է):

«Ա.»

### Գերմանիոյ Բանագործներն Մեծամասնութիւն Կողմ Է Թուրքիոյ՝ ՕԹԱՆ-էն Հեռանալուն

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Գերմանիոյ բնակչութեան 58 առ հարիւրը կողմ արտայայտուած է Թուրքիոյ՝ ՕԹԱՆ-ի կազմէն հաւանական հեռացման, իսկ 18 առ հարիւրը՝ դէմ: Զարգախոյզը կատարած է «ԻւԿով» հիմնարկը՝ Թուրքիոյ՝ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններ ներխուժման լոյսին տակ:



Զարգախոյզի մասնակիցներուն 61 առ հարիւրը թեր արտայայտուած է Թուրքիոյ դէմ պատժամիջոցներու կիրարկումին, իսկ 69 առ հարիւրը դէմ է դէպի Թուրքիա ապրանքներու արտածումին:

«Տեօչէ Փրէս» լրատու գործակալութիւնը, որուն պատուէրով կատարուած է հարցախոյզը, կը յայտնէ, որ ՕԹԱՆ-ի 1949 թուականի համաձայնագիրը չի կանոնակարգեր անդամ պետութիւններու կազմակերպութենէն հեռացման հոլովոյթը: Այդ առումով Թուրքիոյ դէմ այդպիսի քայլեր կիրարկելը անելի խնդրայարոյց պիտի ըլլայ:

Գերմանիոյ մէջ տակաւին միայն Ձախերու Կուսակցութիւնն է, որ այդպիսի առաջարկ ներկայացուցած է: Իսկ երկրի արտաքին գործոց նախարար Զայքո Մասս Թուրքիան կոչած է ՕԹԱՆ-ի կարեւոր դաշնակից:

### ՆԱՄԱԿ՝ ՍԵՄ-Ի 40-ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ



Քրիստ Խոյեան

Ձեռնարկի պատրաստութեան առաջին ժողովին, սեղանին շուրջ նստած, երբ առաջարկեցին յայտագիրին անելցնել պարախումբի ելոյթ, առաջին անգամ մտածեցինք՝ «Ո՞վ պիտի պարէ»: Զամագայինի «Սարդարապատ» պարախումբը օրերս արական սեռի պարող գրեթէ չունի, իսկ մենք եթէ հրաւիրելու ըլլանք տղաք, անոնք հաւանաբար, մէկը միւսէն ամէնալավ, չգան: Այս մտահոգութիւնը ունենալով մէկտեղ առինք անուանացանկը ու մէկ-մէկ սկսանք պարողներու անուններ ճշդել-մաղել: Մեր ընտրած անձերուն թիւը 15-ը անց էր: Որոշեցինք բոլորը միասին հրաւիրել, որպէսզի մէկը միւսը տեսնելով քաջալերուի ու մասնակցի:

Չէինք սխալած այդ քայլը առնելով: Ծիշդ է, ոմանք չուզեցին մասնակցիլ, բայց անոնց փոխարէն ուրիշներ մասնակցեցին մեծ թիւն ու ՍԵՄ-ի առօրեային մէջ Նոր այս երեւոյթը տեսնելով փափաք յայտնեցին

համար: Երկու ամսուան ընթացքին շատ դժուարութիւններէ անցանք՝ ժամեր դասաւորել, ձեւեր իւրացնել, կրկնել ու կրկնել...: Աշխատանքը դանդաղեցաւ մերթ ընդ մերթ՝ կարգ մը մասնակիցներու բացակայութեան հետեւանքով, բայց եւայնպէս ներկաներ միշտ ալ եղան, չյուսահատողներ միշտ ալ եղան, եղան այնպէս, ինչպէս կ'ուզէինք ու կը փափաքէինք: Ու երբ պարերը իւրացուցինք, իւրաքանչիւրս իր մտքին մէջ կը վերոյիջեր պարուսոյցին թելադրանքը, նկատողութիւնները: Յաճախ քով-քովի կու գայինք ու մէկս միւսին ցուցմունք կու տար, ուժ կը ներշնչէր:

«Ձայնով, տղա՛ք» կ'ըսեր մէկը, «Բերդ պիտի ելլենք այսօր, տղա՛ք: Պի՛նդ կեցէք» կ'ըսեր միւսը, «Ձեւը ցոյց տուր: Ոտքդ լա՛ն վեր հանէ» կ'ըսեր պարուսոյցը: Իսկ երբ դադարը անարտեր՝ «Ե՛լ, մէկ հաստ ալ պարենք» կ'ըսեր եռանդուն ընկեր մը առօրեայ ծանրա-



մաս կազմել պարողներու մեր խըմբակին: Պարուսոյցը որոշած էինք նախքան պարողները որոշելը: Վըստահ էինք, որ ան հմուտ եւ ջանասեր է, բայց հարցում մը ինքզինք կը պարտադրէր յաճախ... արդեօ՞ք պարողները լուրջի պիտի առնեն մեր առաջարկը, որքանո՞վ պիտի կրնանք յաջողցնել ելոյթը՝ ոչինչէն բան մը մէջտեղ բերել, գեղարուեստական յայտագիրը հարստացնել իւրայատուկ բաժինով մը:

Ոմանք ըսին, որ մենք մշակութային միութիւն չենք, երիտասարդական միութիւն ենք, պար պիտի ներկայացնենք, բայց պայման չէ որ պարախումբի մը գեղարուեստական մակարդակով հանդէս գանք, մեր ունեցածով, մեր ջանքերով, մեր կարելին պիտի ընենք: Ուրիշներ յոյս կը ներշնչէին՝ պարողներուն մէջ փորձառու դէմքեր տեսնելով: Այդուհանդերձ չէինք կրնար կարծիք մը կազմել կամ ակնկալիք մը ունենալ, մինչեւ ականատեսը ըլլայինք փորձերու կանոնաւոր ընթացքին:

Փորձերը սկսան: Սրահին մէջ մասնակիցներուն պատկերը յուսադրիչ էր, իսկ տիրող մթնոլորտը՝ քաջալերելի: Ժամանակին նեղ ըլլալը ստիպեց մեզ փորձերը առօրեայ դարձնել: Առօրեայ փորձերուն հեւքը բաւական ծանր եղաւ բոլորիս

բեռնուածութենէն յոգնած իր ընկերոջ եւ ձեռքը երկարելով ոտքի կը հաներ զինք:

Վերջին շաբթուան ընթացքին պարերը սորված ըլլալով մէկտեղ անդադար կը կրկնէինք գանոնք՝ կատարելագործելու մեր ելոյթը: Պարեցինք, սխալեցանք, սրբագրեցինք, կրկնեցինք, համաչափ դարձուցինք մեր շարժումները, մեր փորձերը շարունակուեցան հանդիսութեան բեմին վրայ եւ այնտեղ ալ պարեցինք նոյն թափով:

ԻՍԿ ԵԼՈՅԹԻՆ ՕՐԸ...

Բառերը անգոր են արտայայտելու ելոյթի օրուան այն գեղուն գագուսները, զորս ապրեցանք ու վայելեցինք: Զանդիսականներուն ծափողջոյնները, տեսախցիկներուն փայլակները, պարին ընթացքին ժպտուն դէմքերը մեր եռանդը եւ ուրախութիւնը կը կրկնապատկէին: Կանչերը կը դառնային անելի հնչեղ, նախապէս մեր ոտքերուն անհամաչափ գարկերը՝ գերագանցապէս համաչափ: Մեր մարմինէն անելի մեր հոգին կը պարեր բեմին վրայ: Զոգին, որ քաղեց իր տքնաջան աշխատանքին պտուղը:

Ձեր վարձքը կատար, ընկերներ: «ԶԱԼԵՊԸ ՊԻՏԻ ԹՆԴԱՅՆԷԸ», կ'ըսէր պարուսոյցը տեւաբար: Իրաւացի էր, իսկ դուք՝ ԲԱՅԱՌԻԿ:

Զամագայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան  
Լեւոն Շանթ Թափերական Միաւորը կը ներկայացնէ

Տպագրութեամբ  
ԲԵՐԻՈՅ ՏԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ  
ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ Ս. ԵՊՍ. ԶՕԳՈՒԲԵՆԻ

# ԵՄԻՄԱՐԴԸ

Զեռուան Լեւոն Շանթ

Բեռնուածութեամբ  
ՅՈՒՆԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ

Մեր գոբաւոսործիւնը  
ԱՅՆ ԶԷ, ՈՐ  
ԱՆՆԱՐՉՈՒՄ ԿԱՆ  
ԹՈՒՐԷՐ,  
ԱՅԼ ԱՅՆ, ՈՐ  
ԿԱՆ ԹՈՒՐԷԱՆՄԱՆ  
ՀԱՅԵՐ

Պարերու նմուշ

Կիրակի 17 եւ 24 Նոյեմբեր 2019-ի երեւոյթներ 7:00-ին, «Գեորգ Եսայեան» սրահին ներքին:

## ՅԵՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՅԱՐԹԱՆԱԿ Է, ՍԱԿԱՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ ԶԷ ԱՆՏԵՍԵԼ

Յարութ Սասունեան

29 Հոկտեմբերի 2019-ին, ամերիկահայերը նշանակալից յաղթանակ տարին ԱՄՆ Քոնկրետի սրահներուն մէջ: 35 տարուան ընթացքին առաջին անգամ ըլլալով ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատը ընդունեց Հայոց Յեղասպանութեան փաստերը հաստատող 296 թուակիր բանաձեւը:

Ես օգտագործեցի «հաստատող» եզրը, քանի որ հակառակ բազմաթիւ հայ եւ ոչ-հայ մեկնաբաններու կարծիքին, առաջին անգամը չէր, որ Միացեալ Նահանգները կը ճանչնար Հայոց Յեղասպանութիւնը: Իրականութեան մէջ, սա ամերիկեան կառավարութեան կողմէն հինգերորդ ճանաչումն էր: Ինչպէս անցեալ տարիներուն բազմիցս ըսած եմ, Միացեալ Նահանգներու կառավարութիւնը առաջին անգամ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած է 1951-ին, երբ պաշտօնական փաստաթուղթ դրկած է Արդարադատութեան Միջազգային դատարան (Համաշխարհային դատարան)՝ Հայոց Յեղասպանութիւնը ներկայացնելով որպէս ցեղասպանութեան օրինակ: ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատը Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած է 1975 եւ 1984 թուականներուն ընդունուած երկու բանաձեւերով, իսկ Նախագահ Ռոնալտ Ռեյկըն Նախագահական հռչակագիր հրապարակած է 22 Ապրիլ 1981-ին՝ վկայակոչելով Հայոց Յեղասպանութիւնը:

Տարբեր մեկնաբաններու կողմէ հնչած սխալ մեկնաբանութիւններու կարգին էին այնպիսի յայտարարութիւններ, ինչպիսիք էին.

1. «29 Հոկտեմբեր 2019-ին Ներկայացուցիչներու պալատին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը առաջին անգամն էր հարիւր տարուան ընթացքին, ուր Միացեալ Նահանգներ ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը»: Այդպէս չէ եղած... իրականութեան մէջ, 296 թուակիր բանաձեւի բովանդակութեան մէջ ինքնին կը թուարկուին Հայոց Յեղասպանութեան մասին ԱՄՆ-ի կողմէ նախորդ բոլոր ճանաչումները եւ սա կը բնութագրուի որպէս հաստատում, ոչ թէ ճանաչում:

2. «296 թուակիր բանաձեւը կը սահմանէ ԱՄՆ-ի կառավարութեան Հայոց Յեղասպանութեան ճանաչման քաղաքականութիւնը»: Նման բան չէ եղած: Այս բանաձեւը, իր նախորդներուն նման ոչ-պարտադիր բանաձեւ է, որ պարզապէս կ'արտայայտէ Քոնկրետի կամքը: Ան օրէնք չէ եւ իրականութեան հետեւանքներ չունի:

3. «296 թուակիր բանաձեւը կը պարտադրէ Նախագահ Թրամփին օգտագործել ցեղասպանութիւն եզրոյթը իր յաջորդ ապրիլ քսանչորսեան ուղերձին մէջ»: Նախագահը, ուզած պահուն, կրնայ օգտագործել այլ մեղմ եզրեր՝ Հայոց Յեղասպանութիւնը նկարագրելու համար, ինչպէս ինքն ու ԱՄՆ-ի այլ նախագահներ ըրած են Նախագահ Ռեյկընէն ետք:

4. «296 թուակիր բանաձեւը թոյլ կու տայ հայութեան Թուրքիոյ դէմ դատական հայցեր ներկայացնել ԱՄՆ-ի դատարաններուն՝ պահանջելով վերականգնել ցեղասպանութեան ընթացքին իր կրած վնասները»: Սա ճիշդ չէ: Ինչպէս վերը յիշեցինք, Քոնկրետի մէջ 1975 եւ 1984 թուականներուն ընդունուած են երկու նոյնանման բանաձեւեր, որոնք չեն օգնած հայերուն ԱՄՆ դատարաններէն ներս Թուրքիոյ դէմ որեւէ դատական գործ շահիլ:

5. «296 թուակիր բանաձեւի ընդունումէն ետք, եթէ ԱՄՆ Ծերակոյտը ընդունի իր համապատասխան բանաձեւը (Ծերակոյտի թիւ 150 բանաձեւ), եւ Նախագահ Թրամփ ստորագրէ զայն, այն առեն այդ բանաձեւը կը ստանայ օրէնքի ուժ»: Սա ճիշդ չէ, քանի որ ինչպէս Ներկայացուցիչներու պալատին, այնպէս ալ Ծերակոյտին տարբերակները «առանձին» բանաձեւեր են: Եթէ Ծերակոյտին տարբերակը նոյնպէս ընդունուի, բանաձեւը չի փոխանցուիր Նախագահին ստորագրութեան համար, քանի որ Պալատին եւ Ծերակոյտին տարբերակները չեն ներկայացուած որպէս «նոյնանման բանաձեւ»:

Այնուամենայնիւ, վերոնշեալ պարզաբանումներէն ոչ մէկը չենք կատարել 29 Հոկտեմբերի 2019 -ին ընդունուած թիւ 296 բանաձեւը արժեքըրկելու համար: Ստորեւ կը պարզաբանեմ, թէ ինչո՞ւ այս բանաձեւը նշանակալից յաղթանակ կը համարուի Հայ Դատին համար:

1. 35 տարի շարունակ Ներկայացուցիչներու պալատէն ներս ցեղասպանութեան բանաձեւի ընդունման փորձ կատարելէ ետք, ամերիկահայ համայնքին համար սա նշանակալից ձեռքբերում է՝ վերջապէս արձանագրել կարենալ նման յաղթանակ մը: Կարելի չէ շարունակ պահանջել, որ հայ հանրութիւնը տասնամեակներ շարունակ աջակցի գործի մը՝ առանց ժամանակ առ ժամանակ որոշ արդիւնքի հասնելու: Այս յաղթանակը կ'աշխուժացնէ ամերիկահայերը՝ շարունակելու իրենց նուիրումը Հայ Դատին եւ աշխատելու աւելի մեծ նուաճումներու հասնելու համար:

2. Թէեւ 296 բանաձեւի ընդունումը չի պարտադրեր Միացեալ Նահանգ-

ներու Նախագահին, սակայն կը շեշտադրէ անոր վրայ բանեցուած ճնշումը, որպէսզի պատշաճ ձեւով ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը ապրիլ քսանչորսեան իր յայտարարութեան մէջ:

3. Թիւ 296 բանաձեւը կը դժուարացնէ Նաեւ Հայոց Յեղասպանութեան ժխտումը շարունակելու Թուրքիոյ կառավարութեան քաղաքականութիւնը:

4. Տարօրինակօրէն, թիւ 296 բանաձեւի ընդունման Թուրքիոյ ղեկավարներուն կողմ արձագանգները նպաստեցին թուրք ժողովուրդին եւ ամբողջ աշխարհին Հայոց Յեղասպանութեան յիշեցման:

5. Թիւ 296 բանաձեւի ընդունման առնչուող հազարաւոր յօդուածներ, հաղորդումներ եւ հասարակական ցանցերու գրառումներ օգնեցին ընդհանրացնելու Հայոց Յեղասպանութեան արձարծումը որչ աշխարհի տարածքին: Յեղասպանութեան աւելի քան 100 տարի անց, արդարութեան համար ճիշդ տակաւին կը հնչէ հայերուն եւ անոնց աջակիցներուն աշխուժութեան շնորհիւ:

6. Թիւ 296 բանաձեւի ընդունումը քայլ մըն է Թուրքիոյ եւ համաշխարհային հանրութեան վրայ հայերու կողմէ ճնշում բանեցնելու պայքարին մէջ՝ ցեղասպանութեան վնասի հատուցման ի խնդիր հետագայ քայլերու ձեռնարկելու համար՝ հակառակ աւելի քան մէկդարեայ ուշացումին...

7. Բացի պատմական իրադարձութեան տարեգրութեան ուղղումէն, ցեղասպանութեան բանաձեւի ընդունման ջանքերը քաղաքական պայքար են ամերիկահայ համայնքին եւ Թուրքիոյ կառավարութեան ու անոր վճարովի լոպիստներուն միջեւ, թէ ո՞ր կողմը աւելի մեծ քաղաքական ազդեցութիւն ունի Ուաշինկթընի մէջ: Ընշող մեծամասնութեան յաղթանակը (405 ձայն ընդդէմ 11-ի) Թուրքիոյ շախջախիչ պարտութեան եւ հայերու լիարժեք յաղթանակին ակնյայտ ցուցանիշն է:

8. Տարիներ շարունակ Թուրքիոյ կառավարութիւնը տասնեակ միլիոնաւոր տղարներ վատնած է՝ վարձելով ամերիկեան բարձրակարգ լոպիստական ընկերութիւններ՝ ԱՄՆ Քոնկրետին կողմէ Հայոց Յեղասպանութեան բանաձեւերուն հաստատումը խափանելու ձախող փորձերուն համար: Կարելի չէ խեղաթիւրել ցեղասպանութիւնը որպէս մարդկային արարք, անկախ անկէ, թէ քանի՞ միլիառ տոլար կը ծախսէ Թուրքիան լոպիստներուն վրայ:

9. Թուրքիոյ պարտութիւնը Նաեւ ուղերձ է թրքական հասարակութեան, որ իր վճարած յարկերը կը մսխուին իր կառավարութեան կողմէ՝ անհերքելի ժխտելու համար:

10. Ոմանք թիւ 296 բանաձեւի ընդունման ակնարկելով դիտել կու տային, որ Քոնկրետը օգտուած է Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ լարուած յարաբերութիւններէն: Հակառակ որ սա ճիշդ է, բայց կան քանի մը հակափաստարկներ եւս.

ա) Քոնկրետը քաղաքական մարմին է. հետեւաբար, անոր բոլոր քննարկումներն ու որոշումները քաղաքական բնոյթ կը կրեն:

բ) Եթէ ամերիկահայ կազմակերպութիւններու եւ ամերիկահայ համայնքի եռանդուն ջանքերը ի գործ չէրուէին, երաշխիք չկար, որ այդ բանաձեւը յայտնուէր Ներկայացուցիչներու պալատի օրակարգին վրայ: Բանի որ ԱՄՆ-ի Քոնկրետը դժգոհ էր Թուրքիոյ ինսիսային Սուրիա ներխուժումէն, Ներկայացուցիչներու պալատը կը գոհանար 29 Հոկտեմբերի 2019-ին Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ կիրառող բանաձեւ ընդունելով՝ քիրտերուն դէմ իր բարբարոսական յարձակումներուն համար: Սակայն հայկական կողմին աշխուժութեան շնորհիւ Ներկայացուցիչներու պալատը նոյն օրը ընդունեց Նաեւ Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւը:

գ) Մենք չենք կրնար այնքան միամիտ ըլլալ ակնկալելու, թէ որեւէ կառավարութիւն կրնայ պաշտպանել Հայ Դատը, եթէ այդ մէկը կը հակասէ իր շահերուն: Շատ տրամաբանական է, որ Հայոց Յեղասպանութեան դատապարտումը կը համընկնի Թուրքիոյ նկատմամբ այլ պատճառներով Քոնկրետի գալորտի հետ: Փաստօրէն, հայերը որքան շատ կարենան գըտնել իրենց շահերը այլ երկիրներու շահերու համապատասխան դարձնելու պատճառներ, այնքան աւելի յաջողութիւն կը գտնեն Հայ Դատի հետապնդման գործին մէջ:

Որպէս յաջորդ քայլ, ես յոյս ունիմ, որ ԱՄՆ Ծերակոյտը կ'ընդունի 150 թուակիր բանաձեւը: Սա կարելոր է, քանի որ ԱՄՆ Ծերակոյտը երբեք չէ ընդունած Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ: Հաւանաբար յաջորդ տարի Հայոց Յեղասպանութեան բանաձեւը վերանայուելու առիթ կ'ունենայ, բայց այս անգամ որպէս «նոյնանման բանաձեւ»: Սա կը նշանակէ, որ եթէ Քոնկրետի պալատները բանաձեւը ընդունին, իսկ Նախագահը ստորագրէ զայն, Հայոց Յեղասպանութեան բանաձեւը կը դառնայ ԱՄՆ օրէնք, եւ ոչ թէ պարզապէս «ոչ-պարտադիր» բանաձեւ: Սա Ամերիկայի ապագայ բոլոր Նախագահները պարտաւոր կը դարձնէ օգտագործելու Հայոց Յեղասպանութիւնը եզրոյթը իրենց ապրիլ քսանչորսեան ուղերձներուն կամ որեւէ այլ առիթով:

**Արեւելահայերէնի թարգմանութիւնը՝ Ռուզաննա Աւագեանի  
Արեւմտահայերէնի վերածումը՝ «Գանձասար»ի**



## ՊԱՐՏԷԶԻ ՄԵՐ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ



Լմա Ագադյան

Պարտեզով տան մը մէջ բնակած ենք աւելի քան չորս տասնամեակ: Այնտեղ ապրած ենք պահեր, որոնք տպաւորած են մեզ մեր բովանդակ կեանքի տեւողութեան:

Այնտեղ է, ուր մէկէ աւելի անգամներ ընդունած ենք Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Սուրեն Սրբ. Արք. Գաթարոյեանը, բնականաբար իրեն մտերիմ անձնաւորութեանց հետ, որոնք իր անմիջական գրուցակիցներն էին եղած: 1977-ի Կիրակի առաւօտ մըն էր: Կանուխ արթնցած տան անհրաժեշտ կարգադրութիւնները կ'ընէի: Մեծ բակ մը ունէինք, որ պետք է մաքուր եւ ներկայանալի ըլլար, հետեւաբար աւելը ձեռքիս, ջուրի խողովակն ալ քրոջս ձեռքին, կ'աշխատէիք ժամ առաջ վերջացնել մաքրութիւնը, որմէ յետոյ սեղա-

ել առանձին նշանակութիւն: Այս բառին համապատասխան գորութեամբ եւ թելադրականութեամբ հոմանիշ կարելի չէ գտնել ուրիշ լեզուներու մէջ»:

Բոլորը լուռ էին: Օրուան հաճելի մթնոլորտին աննախընթաց երեւոյթ էր տիկին Սնակեանի մենապարը, այնքան բնական եւ նագանքով, որ մինչեւ օրս յիշողութեանս մէջ կը մնայ նոյն տպաւորութեամբ:

Այդպէս, ուրիշ հիւրեր դարձեալ, որոնք 1989-ի Կիրակի յետմիջօրէի մը երեւցան անակնկալօրէն, երբ փափաքեցանք ունենալ իրենց կենսագրական տուեալները, ըսուեցաւ որ պետք էր համբերել, ընկ. Ռաֆֆի Սարաֆեանն էր, որուն տիկնոջ անմիջական ընկերակիցներն էին՝



նը եւ յարակից բաժինները պիտի պատասխատէինք, երբ անակնկալօրէն պարտեզին դուռը բացուեցաւ եւ սրբազան հայրը գոհունակ դէմքով քայլերը դէպի ներս ուղղեց: Անոր կանուխ ժամանումէն գարմացած գոչեցի. - Այս որբան կանուխ եկաւ սրբազանը այսօր, - լսած ըլլալով բողոքս ան աւելցուց. - Լա՛ւ ըրի, ուրիշ անգամներ ալ այսպէս կանուխ պիտի գամ: Զիչ յետոյ մնացեալ հրաւիրեալներն ալ աւելցան եւ մինչեւ իրիկուն լաւ ժամանակ անցուցինք: Ներկայ հիւրերուն մաս կը կազմէին նաեւ գրագետ, պատմաբան Պօղոս Սնակեանն ու իր տիկինը, որոնք հաճելի ժամեր պարզեցին բոլորիս: Պրն. Պ. Սնակեան անգուգական խօսակից ըլլալով, սրբազան հօր հետ զրուցելէ ետք ընդհանուրին ակնարկելով աւելցուց. «*Հիմա ներկաներուն հարց պիտի տամ, թէ արդեօք գիտէ՞ն «լեզու» բառին իմաստը*»: Պահ մը լուրջութիւն տիրեց, ապա աւելցուց. - Ըսեմ ձեզի հետեւեալը. «*Լեզուն բառերու կուտակում մը չէ, նախադասութիւններու շարադասութիւն մը չէ, ժողովուրդի մը ներքին «դաշտանկարային», արտաքինացած համապատկերն է լեզուն: Արիւնը այլեւո՞րո՞շ շարժում է, հոգին գուարթացնող ձայն է, սիրտը աշխուժացնող գոյն է: Իւրաքանչիւր բառ պատմութիւն մը ունի*

Պէրութեան ժամանած տեր եւ տիկին Մ. Զերկելեանները, դուռն. արուեստաբան Մ. Ծիրանի: Հիւրերը բնական ուշ հասան: Պրն. Մովսէսին ձեռքին կար կաւէ փոքր ըմպանակ մը, որ, իր բացատրութեամբ, հնութիւն մըն էր: Զամագայինի հրաւերով Պէրութեան ժամանակ տեր եւ տիկին Զերկելեանները դասախօսութեան առաջընթացով Զալէպ կը գտնուէին: Պարտեզը հնագիտութեամբ զբաղած էր միշտ, հետեւաբար իմացած ըլլալով մեր բնակարանի ունեցած հնագիտական առաւելութեան մասին, ուշադրութիւնը կեդրոնացուցած էր այդ ուղղութեամբ իմացած գեկոյցներուն եւ փափաքած անձամբ գալ եւ հաստատել իմացածը:

Զամագայինի հրաւերով տեր եւ տիկին բեմադրիչ Վարուժան Խտըշեանները եւս 1987-ին Զալէպ կը գտնուէին թատերախաղ մը ներկայացնելու համար: Առ այդ, շատ աշխատանք կարտանելու: ՆորԳիւրի, Գաբրիէն կռնակը գտնուող յարկաբաժին մը, որ համագայնական Կարպիս Դերձակեանին կը պատկանէր, սիրով տրամադրուեցաւ Խտըշեաններուն եւ տունը կոչուեցաւ «Չոքնալանց», որովհետեւ նախապէս Դերձակեանի զոգանքն ալ որպէս սեփականատեր հոն բնա-

Շար. Էջ 14

## ՅԵՆ-Ի ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒԱՆ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻՆ ԶԱՄԵՐԳԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻՆ

ԶԲԸ Միութեան ԶԵ Ընկերակցութեան «Ա. Խաչատուրեան» երաժշտանոցը դարձած է արուեստի իսկական դպրոց մը՝ շնորհիւ իր կանոնաւոր դասաւանդութեան եւ դասարանային բաժանումներուն: Այնտեղ ոչ միայն հալէպահայութեան, այլեւ ընդհանրապէս հալէպաբնակ աշակերտներ կը ստանան երաժշտական որակաւոր ուսում, զանազան նուագարաններու օգտագործման դասընթացներու հետեւելով:

Երաժշտանոցի Յանձնախումբին կազմակերպութեամբ, Կիրակի, 20 եւ 27 Յոկտեմբեր 2019-ին, ԶԲԸ Միութեան «Գ Յ Նագարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Զայ երաժշտութեան Մեսրոպ Մաշտոցին՝ Կոմիտաս Վարդապետին Ծննդեան 150-ամեակին նուիրուած դասական համոյթ մը, կատարողութեամբ ԶԵ Ընկերակցութեան Կոմիտասի անուան Սենեկային նուագախումբին: Յատկանշական էր, որ Սուրիոյ մէջ իր տեսակով միակը հանդիսացող նուագախումբին անդամները գրեթէ բոլորն ալ երաժշտանոցի ուսուցիչներ են, որոնք իրենց ուսումը կատարելագործած են հետեւելով երաժշտանոցի եւ ապա ԶԲԸ Միութեան Զայաստանի մէջ կազմակերպած երաժշտական ծրագրին:

Խումբին մաս կը կազմէն եօթը առաջին ջութակահար, վեց երկրորդ ջութակահար, երեք վիոլիստ, երեք թաւ ջութակահար, երկու ֆլիւթիստ, մէկ դաշնակահար եւ երկու երգիչ: Սենեկային խումբի ղեկավարն է մայիսթո բժիշկ Սարգիս Իսկէնեան, որ հմտութեամբ կը ղեկավարէ նաեւ միութեան 65-ամեայ «Սպենդիարեան» երգչախումբը:



Ելոյթին երկու մասէ կազմուած ծրագիրը Կոմիտասի «Երկինքն Ամպէ Ա», «Զէլէ-Զէլէ», «Կռունկ», «Գարուն Ա», «Զինար Ես», «Նագան Իմ Եարը», «Վաղարշապատ» յորինումներուն կողքին կ'ընդգրկէր Զենտրի, Պախի, Պրամի եւ համաշխարհային երաժշտութեան այլ տիտաններու զլուխ գործոցներ:

Պետք է արձանագրել նաեւ, որ գերագոյն հաճոյք էր ունկնդրել այս նուագախումբին անթերի, ներդաշնակ, երբեմն մեղմ, երբեմն ուժգին հընչող կատարումը: Պարզապէս կարելի էր հիանալ անոր որակին ի տես, յատկապէս հալէպեան բեմէ, հալէպցի երաժիշտներու կողմէ հրամցուած ըլլալու հանգամանքը նկատի առնելով:

Հանդիսավարներ Թամար Խաչապետեանի եւ Կարպիս Երանոսեանի կողմէ հայերենով եւ արաբերենով Կոմիտասի եւ անոր անգուգական արուեստին մասին մեջընդմէջ կատարուող մեկնաբանութիւնները ոչ միայն կը հարստացնէին երեկոն, այլեւ հանդիսատեսը կեդրոնացած կը պահէին ներկայացումներուն վրայ:

Ուրախալի էր տեսնել, որ հմուտ ղեկավարի ձեռքի շարժումներուն հետեւող կատարողները կը նուագէին արհեստավարժ ճկունութեամբ, իրենք եւս ըմբռնելով այս գեղեցիկ արուեստը, որ լեզու չունենալով մարդկային ամենահասկնալի հաղորդակցական կապն է: Ահա թէ ինչ ո՛ւ սրահին մէջ ներկայ եղող արաբները նոյնքան հաճոյքով ունկնդրեցին զայն, որքան հայերը: Աւելցնենք, որ Զալէպի հանդիսատեսն ալ գովելի էր, զարմանալու աստիճան գովելի, չէ՞ որ ան լուռ ու մունջ, ամբողջ երկու ժամ կունկնդրեց դասական երաժշտութիւն: Ըսեմ նաեւ որ առաջին անգամն էր, որ ականատեսը կը դառնայի 500 հանդիսատեսով լեցուն սրահի մը մէջ ներկայացուած դասական նման համոյթի մը:

Առաջին ելոյթին ներկայ էր Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, որ աւարտին իր սրտի խօսքին մէջ շերտօրէն շնորհաւորեց ընկերակցութիւնը, խմբավարը, կատարողները, ապա լուսարձակի տակ առաւ մեր ազգային արժեքները՝ հայրենիքը, հաւատքը, լեզուն, աւելցնելով որ սուրիահայերս հաւատարիմ քաղաքացիներն ենք նաեւ մեր երկրորդ հայրենիքին, որ մեզի կ'ընծայէ ամեն կարելիութիւն՝ պահպանելու մեր լեզուն ու մշակոյթը:

Սրբազան հայրը «Պահպանիչ» աղօթքով փակեց այս բերկրալի համոյթը:

Վարձքը կատար, մայիսթո, վարձքերնիդ կատար կատարողներ, երաժշտական Յանձնախումբ, ԶԲԸ Միութեան եւ ԶԵ-ի վարչական պատասխանատուներ:

Թղթակից



## ՐԵՏԵԻԼՈՎ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՏԱՐՅԵՏԵՐՈՒՆ (ծննդեան 135-ամեակին առիթով)



Լեւոն Շանոյեան

Գրողի մը կամ մշակոյթի վաստակաւոր գործիչի մը յորձեւանը միշտ ալ բաներ մը կը խաղցնէ հոգիիս մէջ: Բոց մը կը բռնկեցնէ: Անգուսպ փափաքը կ'ունենամ գիրքեր, յօդուածներ ու այլազան գրութիւններ կարդալու տուեալ անձին մասին, որպէսզի համալրեմ իմ ունեցած տեղեկութիւնները, վերաթարմացնեմ իմ ծանօթութիւնները ու ենթական ճանչնամ իր ամբողջական վաստակով եւ կատարեալ դիմագծութեամբ:


Այդպէս պատահեցաւ վերջերս ալ, երբ անդրադարձայ, թէ ընթացիկ 2019-ն կը յուշէր Դանիել Վարուժանի ծննդեան 135-ամեակը:

Ճիշդ է: 1884-ի ծնունդներուն 135-ամեակն է այս տարի...:

Իսկ մեր փոքր ածուին մէջ որո՞նք իրենց աչքերը լոյսին բացեր են 1884-ին:

Գլխաւորը Վարուժանն է անշուշտ: Կարելի է յիշատակել նաեւ իր նահատակ գրչեղբայրներէն Տիգրան Չեօկիւրեանը՝ «Վանքը» վէպին հեղինակը, ազգային-մտաւորական գործիչ Շահան Նաթալին, Փարիզի «Յառաջ» օրաթերթի հիմնադիր-խմբագրապետ Շաւարշ Միսաքեանը: Ասոնցմէ տարի մը առաջ, 1883-ին, ծնած էին Յակոբ Օշականն ու Գեղամ Բարսեղեանը, Վիեննայի Մխիթարեան ուխտի երախտաշատ դէմքերէն Յ. Ներսէս Ակիմեանը, նաեւ՝ Պոլսոյ «Յայ Կին» ամսաթերթի հրատարակիչ Յայկա-Նոյշ Մառքն ու Պոսթընի «Յայրենիք» ամսագրի երկարամեայ խմբագիր Ռուբէն Դարբինեանը: Իսկ Վարուժանէն տարի մը ետք՝ 1885-ին, ծնան Ռուբէն Սեւակը, Կոստան Չարեանն ու Վահան Տերեանը, նաեւ՝ մամլոյ ամերիկաբնակ երկարամեայ սպասարկուներ Յրայ Երուանդն ու Միհրդատ Թիրեաքեանը:

Երկու-երեք տարուան ընթացքին՝ ապագայ ի՞նչ փաղանգ մը շահեր է հայ գիրն ու գրականութիւնը: Յիշատակուեցա՞ն այս դէմքերը հրապարակաւ, կամ պիտի ոգեկոչուին արդեօք ի մօտոյ...: Մեր մշակութային միութիւններուն համար՝ ահա-լասիկ աշխատանքի պարարտ դաշտ մը: Օ՛ն, դէպի յորձեւանական խրախճանքներ...  
\*\*\*



Դ. Վարուժան

Վերադառնանք Վարուժանին:

Արեւմտահայ մեր այս տաղանդաւոր բանաստեղծին 135-ամեակը շաբաթներ շարունակ գիրքերու մէջ թաղեց զիս: Կարդացի՛ ի՞նչ որ իմ գրադարանը կամ ակումբի գրադարանը կրնային տրամադրել ինծի, - բանաստեղծութիւններու երկար շարքեր, իր գրական վաստակը վերլուծող ուսումնասիրութիւններ, յուշագրութիւններ ու վկայութիւններ:

Յետոյ, բաւական միտք չարչարեցի՝ գտնելու եւ յիշելու համար այն առաջին բանաստեղծութիւնը, զոր հեռո՛ւ-հեռաւոր օր մը կարդացեր էի Վարուժանէն:

Եւ յստակօրէն յիշեցի: Նախակրթարանի Ե. կարգի աշակերտներ էինք, երբ հայերէնաւանդ մեր ուսուցիչը մեզի կարդաց (եւ այնուհետեւ ալ հրահանգեց որ գոց սորվինք) Դանիել Վարուժանի «Յորեանի Ծովեր»:

Հինգ տուներէ բաղկացեալ գողտրիկ բանաստեղծութիւն մըն էր ատիկա, որուն մէջ նախ կը սորվէինք, թէ «ցորեան»ը մեզի ծանօթ Նոյն ցորենն է, ցորենի հասկը, յետոյ ալ կը հետեւէինք բանաստեղծին գունագեղ նկարագրութիւններուն՝ թէ ինչպէս կանաչագարդ բլուրէն փչող խելայեղ հովերը կը բախէին ցորեաններուն, կ'անցնէին անոնց արանքէն, կ'ալիքաւորէին գանոնք, ի վերջոյ՝ ցորեանի դաշտը փոխակերպելով ցորեանի ծովերու:

**Յովեր կ'անցնին. - Ու ցորեաններս յուշիկ-յուշիկ կ'արթնան. Իրենց խորքէն կը հոսի դո՛ղ մ'անսահման: Գեղադալար կողերն ի վար բլուրին՝ Ծովեր կ'անցնին:**

**Յովեր կ'անցնին. - Զմրուխտներով կը ծփայ դաշտը անհուն: Ծիտը կ'երգէ, թառած՝ հասկի մ'օրորուն, Մինչ իր տակէն ցորեաններու մուգին Ծովեր կ'անցնին, Յովեր կ'անցնին...**

Այս նշանաւոր ու ժողովրդային բանաստեղծութեամբ է որ Դանիել Վարուժան կերպաւորուեցաւ, մարմին առաւ ինծի համար: Պատանիի մը, - որ

ես էի, - առաջին հանդիպումս էր ասիկա Բրգնիկ գիւղի մեծանուն բանաստեղծին հետ...:

### ՎԱՐՈՒԺԱՆԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՄԸ

Այսօր կ'անդրադառնամ, թէ անցնող ակնի քան մէկ դարու ընթացքին որքա՞ն առատ ու վիթխարի գրականութիւն մը կուտակուած է Վարուժանի մասին:

Վարուժանեան գրադարան մը կազմելու փորձ մը կատարուած է երբեք: Գրադարան մը, որուն դարանները լեցնէինք Վարուժանի մասին գրի առնուած ամեն տեսակի ու չափի տպագիր նիւթերով...:


Այդօրինակ գրադարանի մը մէջ ես առաջին հերթին պիտի տեղադրէի նահատակ բանաստեղծին չորս քերթողագիրքերը. - «Սարսուռներ»ը, «Յեղին Սիրտը», «Յեթանոս Երգեր»ը եւ «Յացին Երգը»: Ասոնց քովս ի վեր՝ շուտով պիտի տեղադրէի այս գիրքերուն բազմաթիւ վերատպութիւնները, որոնք կատարուած են թէ՛ Յայաստանի մէջ, թէ՛ Սփիւռքի (Վենետիկ, Երուսաղէմ, Անթիլիաս, Պէյրութ, Պոլիս, Թեհրան եւ այլուր), մերթ իբրեւ անշատ հրատարակութիւններ, մերթ իբրեւ ընտրանիներ ու մերթ ալ իբրեւ երկերու լիակատար ժողովածուներ:

Յետոյ կարգը պիտի գար այն մեծաթիւ ուսումնասիրութիւններուն եւ մենագրութիւններուն, որոնք գրի առնուած են զանազաններու կողմէ՝ թէ՛ վերլուծելու համար Վարուժանի գրական վաստակը, թէ՛ ալ գծելու անոր կարճատե կեանքին լուսաւոր ուղին:

Առանձին դարան մը պիտի յատկացնէի անոնց:

Հոս, ամենէն առաջ պիտի տեղադրէի Լեւոն Էսաճանեանի 1919-ին Պոլիս տպուած գիրքը, որ Վարուժանի կեանքին ու վաստակին ձօնուած անդրանիկ հրատարակութիւնը կը նկատուի: Ատոր քով՝ Յ. Ճ. Սիրունիի Նոյնաման գրքոյկը (Պուքրէշ, 1940): Յետոյ, բանաստեղծին դասընկերոջ՝ Դերենիկ Ճիգ մեծեանի գիրքը (Գահիրէ, 1955): Աւելի անդին՝ Գրիգոր Պլըտեանի «Կրակէ Երջանակը Դանիել Վարուժանի Ծուրջ»ը (Անթիլիաս, 1988): Ասոնց պիտի հետեւէին հայաստանեան հրատարակութիւններ, որոնք արեւելահայ գրականագետներու բարերար եւ աշխոյժ մասնակցութիւնը կ'ամրագրէին Վարուժանագիտութեան կալուածէն ներս: Այսպէս, քով-քովի պիտի շարէի Գ. Սարգսեանի (1947), Յեկտոր Ռշտունիի (1961), Յովհաննէս Դանալանեանի (1961), Վազգէն Գաբրիէլեանի (1978), Ալբերտ Շարուրեանի (1984) եւ Եղիշէ Պետրոսեանի (1987) մենագրութիւնները, բոլորն ալ Երեւան տպուած: Այս շարքին մէջ իր պատուոյ տեղը պիտի գրաւէր Պերճ Չէթունցեանի «Մեծ Լուրին» թատերգութիւնը (1985), որ կը պատկերացնէ Դ. Վարուժանի կեանքն ու եղերական մահը:

Այլ դարանի մը վրայ՝ առանձին թղթապանակներ պիտի կազմէի ու անոնց մէջ մէկտեղէի այն բազմաթիւ կարճ ու երկար յօդուածները, որոնք կ'առնչուէին Վարուժանին: Այստեղ, այլաբնոյթ վերլուծումներով պիտի փայլէին Եղուարդ Ջրբաշեանն ու Ստեփան Թօփչեանը, Սերգէյ Սարինեանն ու Յակոբ Օշականը («Յամապատկեր»), Պարոյր Սեւակն ու Յրանտ Թամրազեանը, Մուշեղ Իշխանը, Արմեն Դարեանն ու Ռ. Յատտեճեանը (ի դէպ, տարաբախտ Պարոյր Սեւակ, դեռ 1945-ին, Երեւանի Պետ. Յամալսարանին կողմէ սարքուած ուսանողական համագումարի մը ընթացքին կը կարդայ փայլուն գեկոյց մը Վարուժանի մասին: Այդ գրական վերլուծական տեղ գտած է յետ մահու հրատարակուած իր «Երկեր»ու 2. հատորին մէջ):



Յետոյ կարգը պիտի գար յուշագրութիւններու: Չանազան պարբերականներու մէջէն պիտի ջոկէի հմտալից յուշեր ու յիշատակներ, որոնք պիտի պատմէին ինծի Վարուժանի ու անոր անմիջական շրջապատին մասին: Մինչայդ, հոսկէ-հոսկէ իմ դիմաց պիտի շարունակէին ցցուիլ ուրիշ գիրքեր ալ: Այս շարքէն՝ բանաստեղծին Սեբաստիոյ աշակերտներէն Առաքել Պատրիկի «Դանիել Վարուժանն Իմ Յուշերում»ը (Երեւան, 1965) կամ այն շահեկան «Նամականի»ն, բանաստեղծին ստորագրած կամ ստացած նամակներուն ժողովածուն, զոր հոգածութեամբ ու մեծ գուրգուրանքով հրատարակութեան պատրաստեր ու լոյսին բերեր էր հայրենի գիտաշխատող Գոհար Ազնաւուրեանը, Երեւանի մէջ, 1965-ին:


Առանձին թղթապանակներու պիտի կարօտէին նաեւ հայ մամուլի մէջ ցրուած Վարուժանեան լեռնակուտակ նիւթերը: Աստուած իմ, կա՞յ մէկը՝ որ պիտի յաջողի մաղէ անցընել վերջին 115 տարիներու բովանդակ հայ մամուլը ու հոնկէ դուրս բերել Վարուժանի առնչուող ամեն էջ ու տող...: Անկարելի՛ առաքելութիւն:

Օ՛, չըլլայ որ մոռնայի բանաստեղծին գործերուն բազմալեզու թարգմանութիւնները: Որքա՞ն շատ են անոնք եւ ի՞նչ բազմաբարբառ լեզուներով, - անգլերէն, Ֆրանսերէն, իտալերէն, ռուսերէն, արաբերէն, Նոյնիսկ՝ թըրքերէն...: Ասո՞նք եւս իրենց տեղը պիտի գրաւէին իմ սարքելիք գրադարանին մէջ:

Եւ վերջապէս, գրադարանին մէկ անկիւնը պիտի դնէի քանի մը վարուժանեան կերպաւորուեցաւ, մարմին առաւ ինծի համար: Պատանիի մը, - որ

## Աշակերտական Անկիւն

### ՅԱՐԳԷ՛, ՈՐ ՅԱՐԳՈՒՒՍ



Աստղիկ Դանիելեան

Յարգանքը կը բխի մարդու ներսիդիէն: Ան դաստիարակութեան հետ կապ ունի:

Այն մարդը, որ չի յարգեր դիմացինը, ինքզինք անարգած կ'ըլլայ եւ իրաւունք չունի յարգանք ակնկալելու ուրիշներէ:

Դժբախտաբար այս օրերուն մարդիկ յաճախ գիրար կ'անարգեն:

Մանուկը, փոքր տարիքէն, ընտանիքին մէջ պէտք է սորվի յարգել ուրիշները: Դպրոցէն առաջ ամենէն մեծ պարտականութիւնը ծնողքինն է: Երբ մէկը կը յարգէ իր դիմացինը՝ ցոյց կու տայ իր դաստիարակուած ըլլալը: Յարգանք կը նշանակէ մարդկայնութիւն եւ մշակոյթ:



Շատ տղեր երեւոյթ է, երբ կը տեսնենք ու կը լսենք, թէ ինչպէս զաւակներ կ'անարգեն զիրենք խնամող, մեծցնող ծնողները, իրենց մեծ հայրերն ու մայրերը:

Յարգանքը ամեն բանէ վեր է, ազնիւ հոգիէ կը բխի:

Մարդ որչափ ալ բարձր դիրքի հասնի, արժէք մը չի ներկայացներ, եթէ յարգել չի գիտեր:

Ուրեմն քիչ մը անելի յարգալիր վերաբերմունք ունենանք մեր շուրջիներուն, մանաւանդ մեր ծնողներուն ու դասընկեր-դասընկերուհիներուն նկատմամբ: Այն անձը, որ չի գիտեր յարգել, չի կրնար նաեւ սիրել:

Գեղեցիկ սովորութիւն է յարգելը, գեղեցիկ՝ յատկապէս, երբ փոխադարձաբար կ'արժանանանք յարգանքի:

ԺԱ. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

### ՀԱՅԵՐԷՆԸ



Տիգրան Մանճիկեան

Շանթ եւ Զրաչ ընկերներ են: Օր մը Զրաչը հարցուց Շանթին.

- Ի՞նչ են հայերէնի յատկանիշները:

Շանթը պատասխանեց.

- Զայերէնը ճոխ եւ իւրայատուկ լեզու է:

- Ինչո՞վ իւրայատուկ է, չհասկցայ:

- Զայերէնը, ընկերս, հին եւ գեղեցիկ է: Ան ունի զանազան հնչիւններ եւ անոնց յատուկ տառերը:

- Ես կը սիրեմ հայերէնը, որովհետեւ իմ նախահայրերուն լեզուն է, բայց ինչպէ՞ս կրնանք պահել զայն:

- Գործածելով, սորվելով եւ սորվեցնելով: Ուրեմն, ընկերներ, մենք պէտք է գուրգուրանք հայերէն լեզուին վրայ, պահենք ու պաշտպանենք զայն, որ ան ապրի ու գոյատեւէ դարե-դար:

2. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

### Մայրենի Լեզու



Գաբո Պիթար

Զայերէնը հին եւ գեղեցիկ լեզու է: Ան ունի հարուստ բառամթերք: Կը սիրեմ հայերէնը, որովհետեւ իմ մայրենի լեզուն է: Մայրս այդ լեզուով «օրորոցային» երգած է ինձի համար, որ մեծնամ ու սիրեմ լեզուն:

Սիրելը բաւարար չէ, սակայն: Սերը գործով պէտք է արտայայտենք: Ուրեմն խօսինք, գրենք եւ կարդանք հայերէն, որպէսզի պահպանենք զայն:

2. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

### ՅԱՆՈՒՆ ԶՄԸՄ-Ի ՄԵԾ ԸՆՏԱՆՈՒՔԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԵՂՔ. ԶԱՒԵՆ ԲԱԽՏԻԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏՆՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Զաւեպահայ ատամնաբոյժ բժիշկ Չաւեն Բախտիկեան ճանչցուած է բոլորին կողմէ իր ծառայասիրութեամբ եւ համեստութեամբ:

Զաւատաւոր ԶՄԸՄ-ական եղբ. Չաւենը ազգային կեանքէն ներս զանազան պաշտօններ վարած է: Ատենապետութեան յանձնառու պաշտօնը ստանձնած է Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի Խնամակալութեան, Բերիոյ Զայոց Թեմի Ուսումնական Խորհուրդին, Ազգ. Չաւարեան Վարժարանի Զոգաբարձութեան եւ Զայ Ծերանոցի Խնամակալութեան:



Երկար տարիներ մաս կազմած է Բերիոյ Զայոց Թեմի Գաւառական Ժողովին:

ԶՄԸՄ-էն ներս եղած է Զաւեպի մասնաճիւղի Վարչութեան ատենապետ, նաեւ Սկսուտ Խորհուրդի ատենապետ եւ սկսուտ խմբապետ:

Ան ի գնահատանք ԶՄԸՄ-ի շարքերէն ներս իր տարած գործունեութեան եւ վաստակին, ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը զինք պարգեւատրած է ԶՄԸՄ-ի վահանով:

Եղբ. Չաւեն բնաւորութեամբ հեզ, բծախնդիր, կարգապահ, ծառայատէր եւ ազնիւ նկարագրի տէր անձ մըն էր: Մեծ նուիրումով եւ բծախնդրութեամբ կը կատարէր իրեն վստահուած բոլոր պարտականութիւնները: Իր ամբասիր ու անսակարկ ծառայութեամբ կառչած մնաց ԶՄԸՄ-ի վեհ սկզբունքներուն: Բարձրացաւ եւ իր հետ բարձրացուց իրեն յաջորդող սերունդները, անոնց մէջ սերմանելով ազգասիրութեան եւ ծառայասիրութեան ոգին:

Անկէ՛ղծ եղբ. Չաւեն, ճիշդ է որ անգութ մահը եկաւ իսկեց քեզ քու սիրելիներէդ, հարագատներէդ, ընտանիքէդ եւ եղբայրներէդ, որոնցմէ առ յաւետ բաժնուցար, սակայն քու անհատականութեանդ վեհութեամբ ու ազգասիրութեամբ հալեպահայութեան յիշողութեան մէջ պիտի յաւերժանաս:

Ասօր, մենք միայն քու մարմնիդ հրաժեշտ կու տանք, սակայն քու հայատրոփ հոգիդ եւ ազգային գաղափարներդ մեր հետ պիտի մնան առյաւելտ, որպէս լուսաշող փարոս եւ ներշնչման աղբիւր:

Այս տխուր առիթով ԶՄԸՄ-ի մեծ ընտանիքը իր սրտագին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի եղբօր, կողակիցին, զաւակներուն եւ հարագատներուն:

Զողը թեթեւ ըլլայ վրադ: Յիշատակդ վառ պիտի մնայ մեր յիշողութեան մէջ:

Եղբ. Արմէն Քեօշկերեան

### ԶՕՏ ՏՈՔԹ. ԶԱՒԵՆ ԲԱԽՏԻԿԵԱՆԻՆ



Տոքթ. Նազար Պօղոս

Նուիրեալ բժիշկ, լուսատու ճրագ, Զանդարտաբարոյ, պարթեւահասակ, Բարութեան նմոյշ, ազնիւ ՄԱՐԴ Էակ, Կեանքէն հեռացար վաղ-անժամանակ...

Անիծեալ ես մա՛հ ու մեծ բռնակալ Վախճանը մարդու ինչպէ՛ս իմանալ, Թէ ի՞նչ է կեանքը, դժուար է գիտնալ Դաժան է նաեւ մահուանդ անսալ

Սա ի՛նչ մեծ բօթ է՝ այրող ու կրակ, Խորունկ կոտորացող վերք է անհատակ, Ազնուահոգի ՄԱՐԴ Էիր համակ, Սիրելի՛ բժիշկ, բարի հրեշտակ...

Մահդ մեծ գուժ է՝ Սուրիահայրութեան Ընտանիք, զաւակ ու ընկերութեան. Խորհուրդ՝ բարութեան ու իմաստութեան, Յաւերժի ճամբորդ՝ ԶԱՒԵՆ ԲԱԽՏԻԿԵԱՆ:

ԴԻՏԱԼԿԻՆ

«ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԺԷ»



Խաչիկ Ծախինեան

Հասարակական կեանքն ներս, եթէ կը ցանկանք որ մեր բոլոր ծրագիրներն ու հեռանկարները յաջողութեամբ պսակուին, եթէ կը սպասենք, որ բանաւոր եակներ յօժարակամօրէն կատարեն մեր պատուերները, կամ բարեհաճութեամբ ընծայեն մեզի մեր ակնկալիքները, ապա անհրաժեշտ է հետեւիլ այն ոսկի յորդորին, որ կ'ըստ.

- «Մարդոց մի զլանար այն, զոր կը փափաքիս ստանալ իրենցմէ...»:

Անշուշտ, բռնամիջոցներով կարելի է որեւէ մէկուն պարտադրել, որ մեր հրահանգներուն ենթարկուի եւ մեր բոլոր թելադրութիւնները գործարդէ: Օրինակ՝ զէնքի ուժով կարելի է ստիպել մեծահարուստի մը որ իր քսակը ամբողջութեամբ պարպէ մեր առջեւ, կամ բրտութեամբ եւ ծեծի սպառնալիքով հարկադրել երեխան լրի կատարելու մեր բոլոր պահանջները:

Սակայն նման ապօրինի եւ վայրագ միջոցներ ընդհանրապէս կ'ունենան անբարենպաստ հետեւանքներ:

Ուրեմն ի՞նչ կը փնտռեն մարդիկ առաջին հերթին եւ առհասարակ:

Մեծահոջակ հոգեբան-գիտնական Սիկմընտ Ֆրոյտս այս անչութեամբ կ'ըստ. «Մարդկային բոլոր արարքները կարելի է վերագրել ներքին երկու տեսակ մղումներու, առաջինը՝ սեռային, իսկ երկրորդը՝ մեծ եւ համբաւաւոր դառնալու տենչանքի»:

Հոգեզգացական թէ ֆիզիքական բարոյութիւնները գերծրական եւ առողջ իւրաքանչիւր մահկանացու, կեանքի մէջ կը ձգտի ունենալ շատ մը բաներ, ինչպէս՝ առողջութիւն, երկար կեանք, բարօրութիւն, հարստութիւն, սեռային բաւարարութիւն, երջանիկ ամուսնութիւն, բարեկիրթ եւ շնորհալի գաւակներ, մասնագիտական ուսում, բարձրագոյն վկայականներ եւ տիտղոսներ, դիրք, պատիւ, համբաւ... ու յատկապէս՝ կարեւորութիւն եւ արժէք:

Վերոյիշեալ ձգտումները մեծ մասամբ կարելի է իրականացնել հետեւողական աշխատանքով եւ տընութեամբ, բացի մէկէն՝ որ Ֆրոյտսի տեսութեամբ «մեծ ու նշանաւոր դառնալու ցանկութիւն»ն է, իսկ մերօրեայ իմաստասերներու սահմանումով «կարեւորութիւն ստանալու փափաք»ը: Ասիկա այն գլխաւոր յատկութիւնն է, որով մարդ արարածը կը տարբերի մնացեալ կենդանիներէն, եւ որ մարդկային քաղաքա կրթութեան հիմնաքարը կը կազմէ:

Կարեւորութիւն ստանալու փափաքը չէ՞ր միթէ, որ Աբրահամ Լինքոլնը՝ ամերիկացի այդ չքաւոր եւ անուս մարդը առաջնորդեց, աղբաւոցի մը տակառներէն գտած իրաւագիտական գիրքերը ի գին ծայրա-

գոյն զոհողութիւններու եւ դժուարութիւններու յամառօրէն սերտելու եւ իւրացնելու, ապագային հասնելու համար իր երկրի բարձրագոյն դիրքին՝ ԱՄՆ-ի նախագահութեան պաշտօնին:

Արժէք ունենալու եւ նշանաւոր դառնալու նոյն այդ ցանկութիւնը չէ՞ր արդեօք, որ ներշնչեց Չարլզ Տիքնզը եւ մղեց զայն երկնելու իր անմահ վէպերն ու ստեղծագործութիւնները:



Արդարեւ՝ ուշադրութիւն գրաւելու եւ գնահատուելու համար մարդիկ կը հետեւին նորաձեւութեան, կը հագուին հրապուրիչ եւ աչքառու հագուստներ, մեծ կարեւորութիւն կ'ընծայեն իրենց վայելչութեան եւ պճնանքին, կը վարեն փարթամ եւ լաւագոյն մակնիշներով արդիական ինքնաշարժներ, կ'ապահովեն շքեղօրէն յար դարուած եւ կահաւորուած ու ամեն յարմարութիւններով օժտուած յանկուցիչ բնակարաններ կամ ապարանքներ, յոխորտանքով կը խօսին իրենց մեծածախս ճամբորդութիւններու եւ գնած թանկարժէք իրերու մասին, մանաւանդ՝ հպարտութեամբ կը յիշատակեն իրենց առաջադէմ գաւակներու արտատոլոր ձիրքերը, արժանիքները, իրագործումներն ու յաջողութիւնները, առանց մոռնալու ընդօժիտանոց գերագնացութեան եւ օժտուածութեան մէջ իրենց ինկած առիծի բաժինը կամ բերած անուրանալի նպաստը:

Կարեւորութեամբ մատնանշուելու կամ համբաւի տիրանալու անդիմադրելի ցանկութիւնը պատճառ դարձած է, որ անչափահասներ կամ երիտասարդներ ներգրաւուին ապառոջ շրջանակներու մէջ, գործեն յոռի եւ անվայել արարաքներ, կարգ մը պարագաներու նոյնիսկ մաս կազմելով յանցագործ եւ ոճրային խմբաւորումներու:

Ընկերաբան-գիտնականներ կը հաւաստիացնեն, որ մարդ-արարածներ երբեմն հոգածութեան, սիրոյ եւ գուրգուրանքի արժանանալու, կամ հասարակութեան մէջ իրենց նկատմամբ հետաքրքրութիւն եւ կարեկցանք ստեղծելու նպատակով, չեն վարակիր միւսներ անգամ խելագարութիւն ձեւացնելու կամ թմրամոլութեան կործանիչ ճիրաններուն յանձնուելու, որպէսզի երեւակայական եւ գիտակցազուրկ վիճակի մէջ, գէթ ժամանակաւորապէս ապրին «կարեւորութիւն եւ արժէք»

զգեցած ըլլալու պատրանքն ու երանութիւնը:

Վերջերս ԱՄՆ-ի մէջ կայացած բժշկական միջազգային համագումարի մը ընթացքին, համաշխարհային վարկ վայելող մեծանուն հոգեբոյժ-գիտնականներ հաստատած են, թէ գերարդիական ամենակատարելագործուած մանրադիտակներու միջոցաւ կատարուած տարրալուծարանային մանրագնիկները նուրթիւներ ապացուցած են, որ խելագարուած կամ իրենց գիտակցութիւնը կորսնցուցած հիւանդներէն շատերու ուղեղները օրկանապէս առողջ են եւ որեւէ վնասուածք չէր: Սա կը նշանակէ թէ խելացնորութիւնը անպայման չի յառաջանար շղային խանգարումներու, հոգեբեկումներու եւ զգացական անհարթութիւններու պատճառած ուղեղային բջիջներու փճացումէն, ինչպէս թիրիմացաբար կը դաւանին կարգ մը հոգեբաններ:

Նոյն համագումարին մէջ գիտնականներ ընդգծած են նաեւ, թէ «ոչ ոք ստուգապէս կրնայ գիտնալ կամ յայտնաբերել մարդոց ցնորամտութեան, ճշմարիտ պատճառները, սակայն խելակորոյս մահկանացուներ շատ անգամ իրենց ողբերգական եւ ապառոջ կացութեան մէջ իսկ կարելորուած եւ կշիռ ստացած կը զգան, երբ կը յաջողին իրենց նկատմամբ խղճահարութիւն, գայրոյթ եւ ընդվզում յառաջացնել, ու հետեւաբար՝ ուշադրութեան կամ հետաքրքրութեան արժանանալ, հոգ չէ թէ բացասականօրէն, պարագայ մը՝ զոր չէին կրցած իրականացնել իրենց սովորական ու բնական կեանքի ընթացքին»:

Այսպէս՝ եթէ կարգ մը բանաւոր եակներ չարհամարիուելու եւ իրենց նկատմամբ ուշադրութիւն հրաւիրելու համար պատրաստ են նոյնիսկ նախատուելու եւ յիմար ձեւանալու, իսկ ուրիշներ՝ անտեսում ու նուաստացում չհանդուրժելու պատճառով եթէ իրողապէս ցնորած են եւ միւսներ անգամ ոճիր գործած, ուրեմն հարկ է պատկերացնել, թէ անկեղծ գնահատանքն ու յարատեւ քաջալերութիւնը անհաւատալի ի՞նչ հրաշքներ կրնան գործել, եւ մարդս ինչպիսի՞ յաջողութիւններու առաջնորդել, պայմանաւ անշուշտ, որ այդ գովաբանութիւնն ու խրախուսանքը ըլլան սրտանց, անխար-

դախ, հեռու սայթաքեցնող եւ շահախնդիր նկրտումներ...: Այլապէս՝ արդիւնքը կ'ըլլայ բացասական, որովհետեւ պատիր եւ երեսանց դրուատիքը, ինչպէս կեղծ ոսկին կամ զեղծուած դրամը, ուշ կամ կանուխ բացայայտուելով կրնայ աննախանձելի կացութեան մատնել զայն անհարկի կերպով եւ չարաշահօրէն շռայլողը:

Բոլորս ալ չենք մոռնար ֆիզիքական կանոնաւոր սնունդ ապահովել մեր գաւակներուն եւ մեր անմիջական հոգատարութեան յանձնուած հարագատներուն համար, անոնց առողջութիւնն ու կենսունակութիւնը երաշխաւորելու արդար մտահոգութեամբ ամեն օր հերթական ժումներով կերակրելով զանոնք: Սակայն հագուադէպօրէն կը մտածենք անոնց (այդ գաւակներու եւ հարագատներու) հոգիները սնուցանել, զգացումները փայփայել եւ ինքնասիրութիւնը շոյել... իսկ այս բոլորի իրականացման համար բաւական են ազնիւ եւ յարգալիք վերաբերմունքը, գովասանական անկեղծ եւ քաղցր արտայայտութիւնները, որոնք անջնջելիօրէն դրոշմուելով անոնց յիշողութեան մէջ մշտապէս պիտի վերաթարմացնեն անոնց հոգիները, պիտի հրճուցնեն անոնց սրտերը, պիտի դառնան վերակենսաւորող մոգական ուժ, որ պիտի մղէ զանոնք անկարելի նուաճումներու:

Անհրաժեշտ է ուրեմն՝ որ երբեմն մոռնանք մենք մեզ, չբաւականանանք միմիայն մենք մեր մասին մտածելով, մեր կարիքներն ու դժուարութիւնները առաջնահերթ նկատելով, լոկ մեր յաջողութիւններն ու իրագործումները լոյսի բերելով, այլ փորձենք քիչ մըն ալ ուշադրութիւն դարձնել ուրիշներուն, հետաքրքրուիլ անոնց ցաւերով եւ պահանջներով, չթերագնահատել անոնց առաւելութիւններն ու արժանիքները եւ անկեղծ դրուատիքով խրախուսել զանոնք...: Այն ատեն միայն պիտի տեսնենք, թէ անոնք որքա՞ն երախտապարտ պիտի ըլլան մեզի եւ ինչպիսի՞ հաւատարմութեամբ կառչած պիտի մնան մեր խրատներուն՝ որպէս նուիրական պատգամ իրենց ողջ կեանքի տեւողութեան միշտ կրկնելով ու կենսագործելով զանոնք, նոյնիսկ եթէ մոռացումի տրուին մեր կողմէ:

ՍՕ Խաչի Ծրջանային Վարչութիւն Առողջապահական Յանձնախումբ

Հաստատութիւն՝ Ծաբարախարի Համաշխարհային Օրուան առիթով

Նխօր՝ ՇԱՔԱՐԱԽՏ-ՏԻԱՊԷԹ

Կը դասախօսէ Մարդասիրական Խումբի մաս կազմող Բժիշկ Տիգրան Պեպրոսեան

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

## Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 319)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Հորիզոնական

- Պատկառանք: Ծանրություն:
- Տառի մը անունը: Հակառակ՝ արդի: Արական անուն:
- Արիւն ծող որդ: Հակառակ՝ ծովի աւազակ:
- Անձնական դերանուն: Խորք:
- 7044: Հակառակ՝ ծառի բունին ստորին մասը:
- Տարածքի միաւոր: Հակառակ՝ կողմ:
- Հոտաւետ ծաղիկ մը: Անձնական դերանուն:
- Իրերայաջորդ տառեր: Հեռու: 7300:
- Հայոց 9-րդ ամիսը:
- Կրկնուած ձայնաւորներ: Բայական լծորդութիւն: 9 Մայիս 1992-ին ազատագրուած արցախեան քաղաք:
- Հակառակ՝ կռակի վրայ տծել ցցուածք: Կրկնուած ձայնաւորներ: Մեղուներու խումբ:
- Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւններէն (երկու բառ): Ոչ հասուն:

#### Ուղղահայեաց

- Լերան գագաթ: Պայքար, պատերազմ:
- Այրած: Պաշտպանութեան համար բացուած փոս: Արական կրճատուած անուն:
- Հակառակ՝ թատրոնի մէջ ստանձնած պաշտօն: Հակառակ՝ տղամարդ: Յարաբերական դերանուն:
- Անմշակ ձգուած հող: Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ Ս. Պատարագի բաժակ:
- Անսկիզբ՝ մշակուած հողի բաժանում: Հայիլ:
- Թուլակամ: Որոշուած գին: Յոգնակերտ մասնիկ:
- Հակառակ՝ 5030: Հակառակ՝ տարածքի միաւոր: Կրկին:
- Ձիրք: Իրարայաջորդ տառեր:
- Յոգնակերտ մասնիկ: Տառի մը հարեւանները:
- Դասախօս: Հակառակ՝ դասակարգ:
- Որսի կենդանի: Հակառակ՝ երթ:
- Ծամբայ հարթող: Բայց:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ուրֆայի հերոսամարտի նահատակներուն եւ Ուրֆայի Երիտասարդաց Միութեան մէջ անցեալին ծառայած վարչականներու հոգիներուն յատուկ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

### Պատրաստեց Մարինա Զիւլքրոշեան-Պօղիկեան ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 318)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

					1	5		9
			2		6			8
			8			6	7	
5	1	9		8		2		6
			5					7
	2	7		4	9	3		1
	4	3	1	7		8		
1		2		6		7		4
	6						9	

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 89)

Սայաթ Նովայի բանաստեղծութիւնները շնչելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 16 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Սայաթ Նովայի բանաստեղծութիւններէն մէկը:

ք	ի	մ	ի	ս	թ	ա	մ	ա	մ
2	ա	վ	ն	ւ	ն	ց	կ	մ	է
ա	ք	մ	ն	ր	յ	վ	ր	ի	ա
տ	ա	ն	ա	ա	ւ	ն	ա	ն	ր
ա	ն	ր	ս	ն	ւ	ղ	կ	ա	ի
2	ի	է	ա	ն	չ	տ	ա	ջ	ն
իւ	տ	ր	ր	ր	ւ	ա	ծ	ի	վ
ա	պ	ի	օ	ն	հ	ն	ւ	ր	ն
ր	ս	ս	տ	է	2	իւ	ն	վ	ւ
հ	է	պ	է	կ	ա	յ	ի	ս	ր

«Թամամ Աշխարհ Պտուտ Էկայ», «Քանի Վուր Զանիմ», «Քամանչա», «Շատ Սիրուն Իս», «Էսօր Իմ Եարին Տեսայ», «Հուր Իս Էշխով Կրակած»

### ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

#### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 318)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	գ	ա	ր	է	գ	ի	ն	իւ	ա	ժ	ա	կ
2	ա	ն	ա	ր	ա	տ		ա	ն	ա	կ	
3	ր	է				է	ի	ր		ն	ն	
4	գ	ր	ի	ւ		ա	իւ	ի	տ			
5	ա		ւ			լ	ր	ա	ն	ա	լ	
6	փ	ա	ր	ն	ս			փ	ն	թ		պ
7	ն	ր	ա	կ		պ	ւ	ն	ս	գ		ա
8	ւ	ա	ց			լ	ն	ւ		է	ա	ն
9	մ		ն	ի	լ			մ		ն	ի	ծ
10		ղ	է	ն	ջ	ա	կ		ս	ի		ա
11	բ	ա	լ	ա	ս	ա	ն		ի		ա	լ
12	ա	մ		ք		ա		ն	ա	ր	ի	

#### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 317)

7	3	4	6	2	1	5	9	8
5	9	6	8	4	3	1	2	7
2	8	1	9	7	5	3	6	4
1	5	9	7	3	8	6	4	2
6	4	3	1	9	2	7	8	5
8	7	2	5	6	4	9	1	3
3	6	8	2	5	9	4	7	1
4	2	7	3	1	6	8	5	9
9	1	5	4	8	7	2	3	6

#### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 88)

Պահուած բառը՝ «Լուսնապարտէզ»

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### ԽՈՅ

Յոգևաբեկ օրեր պիտի դիմաւորէք այս շաբաթ: Թշնամական կեցուածք մի՛ որդեգրէք ձեր ընկերներուն հանդէպ:



### ՑՈՒԼ

Տնտեսական իրավիճակի անկայունութիւն կը նախատեսուի: Արժեւորեցէք ձեր նիւթական պայմանները եւ խնայողութիւն ըրէք:



### ԵՐԿՈՒՐԵԱԿ

Ձեր ընկերային հարցերուն համար մի՛ մեղադրէք ձեր ընկերները: Ճկուն եղէք ու պիտի լուծէք ամենէն բարդ հարցերն անգամ:



### ԽԵՑՂԵՏԻՆ

Հաստատական եղէք, որպէսզի կարենաք համոզել ձեր խօսակիցը: Թոյլ մի՛ տաք, որ ճնշումները տարտղնեն ձեր միտքերը:



### ԱՌԻԾ

Բարձր տրամադրութեամբ պիտի դիմաւորէք նոր շաբաթը: Ձեր նորամշակ ծրագիրը յաջողութեամբ պիտի իրականանայ:



### ԿՈՅԱ

Գաղափարական վեճեր կրնան ծագիլ ձեր գրուցակիցներուն հետ: Մի՛ պարտադրէք ձեր տեսակետը: Ուրիշներուն կարծիքն ալ լսեցէք:



### ԿԵՒՈՔ

Առիթ մի՛ տաք որ ուրիշներ միջամտեն ձեր հարցերուն: Համարձակութեամբ արտայայտեցէք ձեր միտքը:



### ԿԱՐԻՃ

Առողջապահական խնամքի կը կարօտիք: Լաւ սնանելով մէկտեղ մարզանքի հետեւեցէք: Ճնշող շրջան մըն է, բայց բացասական չէ:



### ԱՐԵՂՆԱՌՐ

Գործերով ծանրաբեռնուած եք այս օրերուն: Աշխատեցէք հարցերէն հեռու մնալ: Արկածախնդրութեան մի՛ դիմէք:



### ԱՅԾԵՂՋԻՐ

Լաւատես ու բարի եք: Ձեր յաջողութիւններուն գաղտնիքը մի յայտնէք բոլորին: Վերապահ եղէք:



### ՋՐԴՈՍ

Ձեր սիրեկանէն հետաքրքրական առաջարկ մը պիտի ստանաք: Մի՛ գլանաք ձեր անկեղծ գագացումները արտայայտել անոր:



### ՁՈՒԿ

Նոր աշխատանքի առաջարկ մը պիտի ստանաք, լաւ վարձատրութեամբ: Առիթը օգտագործելով ձեր ակնկալութիւնները յայտնեցէք գործատիրոջ:



## ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆ. ՇԱՊԻԿ-ԶԳԵՍՏՆԵՐ



Աշունը կը մօտենայ աւարտին: Երբեմն կը դժուարանանք մեր ճաշակին համապատասխան հագուստ ընտրել, միեւնոյն ատեն նորաձեւութեան հետ քայլ պահել: Ամառնային պահարանէն հագուկապի անցումային տարբերակ կրնայ ծառայել զգեստ-շապիկը: Այս իմաստով հետաքրքրական տարբերակներ ստեղծած է Շանելը: Օձիքով կամ գօտիով միագոյն շապիկները շատ յարմար են աշխատող կիներու համար: Երկայնքը ըստ ճաշակի՝ կարճ ու մինչեւ ծունկ հասնող, վարի մասը՝ նեղ կամ լայն: Այսպիսի շապիկներու բաց ուսերով տարբերակներն ալ կարելի է օգտագործել, նկատի առած որ օձիքները մեծ են ու լայն:

Նորոյ թ կը համարուին նաեւ ճիւղէ գգեստ-շապիկները՝ շատերուն կողմէ սիրուած ու շատ գործնական: Նման շապիկներ կարելի է հագնիլ նաեւ ցուրտ եղանակին՝ բաճկոն մըն ալ կրելով:

Զգեստ-շապիկները այն տեսակներէն են, որոնց հիման վրայ դիւրութեամբ կարելի է հագուստը բազմաշերտ դարձնել: Նման շապիկ կարելի է հագնիլ տաքատուր կամ գայն համալրել գագակով:

Վերնաշապիկներու ծաղկաւոր կերպասները պաշտօնական ոճէն դուրս են. անոնք շատ լաւ տարբերակ են երիտասարդներու համար: Որքան քիչ եւ փոքր են կերպասին ծաղիկները, այնքան աւելի պարզ միջավայրի մէջ կարելի է հագնիլ նման շապիկներ: Բարակ կերպասով, լայն վերնաշապիկները կարելի է հագնիլ նեղ տափառներու հետ:

Վերնաշապիկ-գգեստը գործածական է, կարելի է տարբեր տեսք տալ անոր՝ ընտրելով տարբեր գարդելներ: Շապիկը սովորական կօշիկներով աշխատանքային հագուկապի տարբերակ կարելի է համարել, իսկ բարձրակրունկ կօշիկներով՝ արդէն քիչ մը պաշտօնական:



## 7 ԳԱՂՏՆԻՔ ԱՌՈՂՋ ԵՂՈՒՆԳՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպէս մաշկին, այնպէս ալ եղունգներուն առողջութիւնը հոգատարութիւն կը պահանջէ: Ձեռքերը յաճախ լուալով, չոր եղանակի ու ջրային իրավիճակներու ենթակայ ըլլալով մեր եղունգները փխրուն կը դառնան, իսկ եղունգներուն նրբամաշկը՝ չոր ու անբարետես: Առողջ ու գրաւիչ եղունգներ ունենալու համար պէտք է զանոնք պահել ամուր, ճկուն ու խոնաւ:

Ա ն ի ր ա ժ ե շ տ է ուրեմա.  
1. Պահպանել նրբամաշկը: Նրբամաշկը շատ բարակ շերտ է եղունգներուն ու մաշկին միջեւ: Ան կը պաշտպանէ եղունգը մանրէներէն:

2. Մաքրութեան ժամերուն ձեռնոց կրել: Փխրուն եղունգներուն կամ կոշտացած նրբամաշկին հիմնական պատճառներէն մէկը վնասակար նիւթերու օգտագործումն է: Երբ մեր ձեռքերը լուանք, ջուրը կը թափանցէ թէ՛ նրբամաշկին, թէ՛ եղունգին միջոցով, բայց ան շատ արագ կը շոգիանայ՝ վերացնելով նաեւ խոնաւութիւնը: Մաքրութեան դեղերը եղունգները կը գրկեն իւղէն ու խոնաւութենէն: Ուստի թելադրելի է մաքրութեան ատեն ձեռնոցներ կրել:

3. Խոնաւ պահեցէք եղունգները: Բուսական որոշ քսուկներ, յատկապէս նուշի եւ քանեպի իւղերը, եղունգները կը դարձնեն աւելի ճկուն եւ



ամուր: 4. Խուսափեցէք վնասակար քիմիական քսուկներ: Որոշ նիւթեր շատ արագ կը թափանցեն եղունգներուն մէջ: 5. Առողջապահական սնունդ օգտագործեցէք: Մեր եղունգներուն տեսքը կ'արտացոլէ մեր ընդհանուր առողջութիւնը: Եղունգներու սպիտակ կետերը կը յուշեն գինքի, իսկ գունատ, բարակ եղունգները՝ երկաթի պակասին մասին: Առողջ եղունգներու հիմնական սնուցիչները սպիտակուցներն են, ինչպէս նաեւ՝ երկաթը, գինքը, կրածինն ու B12 կենսանիւթը: 6. Խ ա ր տ ց է ք եղունգները կտրելու փոխարէն: Եղունգը կազմուած է եղջերաթաղանթի շերտերէ: Կտրելով կամ կոպտօրէն խարտելով եղունգը, մենք կը վնասենք անոր ներքին կառոյցը: Լաւագոյն ձեւը նուրբ խարտոցով գայն ձեւաւորելն է: 7. Ընտրեցէք ձեր եղունգներուն յարմարող ներկը, որ գերծ է քիմիական վնասակար նիւթերէ: Եղունգին ներկը կրնայ նպաստել անոր առողջութեան, եթէ ճիշդ ձեւով ընտրուած է: Ներկը կը պաշտպանէ եղունգը մանրէներէն եւ կը պահպանէ անոր խոնաւութիւնը: Այս 7 թելադրանքներուն հետեւելով կրնաք ունենալ առողջ եղունգներ:

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀԵՏԵՆԵԼՈՎ...

Սկիզբ՝ էջ 9

Լերագրական ժապավեններ, որոնք կ'առնչուին Վարուժանին: Անոնց նորագոյնը, թերեւս, լիբանանաբնակ Նիկոլ Պեգճեանի երեք ժամանակ ժապավենն էր՝ (Milk, Carnation and a Godly Song):

Ի՞նչ կ'ըսեք՝ նմանօրինակ գրողարանի մը ծրագրին ի լուր: Կ'արժէ՞ր իրապէս գործի ձեռնարկել՝ գայն իրականացնելու համար...:

Պատի՛ւ մեր ժողովուրդին, որ 100 տարիէ ի վեր անդադար կ'ապրեցնէ ու կը մեծարէ Վարուժանը:

Անոր ընտիր ու սիրուած գործերը շարունակ կ'արտասանուին մեր բեմերէն:

Անոր ուշագրաւ բանաստեղծութիւնները կը գարդարեն դպրոցական մեր դասագիրքերը:

Ամէն Ապրիլ 24-ի՝ Վարուժան կ'ոգեկոչուի համազգային տարողութեամբ, նահատակ իր գրչեղբայրներուն հետ մէկտեղ:

Մեր մշակութային միութիւնները 15-20 տարին անգամ մը՝ յորելեական հանդէսներ կը սարքեն իրեն ձօնուած:

Հայաստանի մէջ փողոց ու դպրոց մկրտուեր է իր անունով, դրոշմաթուղթ թողարկուեր է իր լուսանկարով, Երեւանէն մինչեւ Կանտ, Վենետիկ ու Պոլիս՝ արձաններ ու քանդակներ կան գինք յաւերժացնող, այլ տեղ մը՝ գրական հիմնադրամ հաստատուեր է իր անունով...:

Մէկ բան կը պակսի իրեն.- Դանիել Վարուժան ԳԵՐԵՉՄԱՆ ԶՈՒՆԻ: Ու մենք չենք կրնար գէթ տարին անգամ մը մեխակ մը գետեղել իր դամբանին վրայ...

Այո՛, բանաստեղծը շիրիմ չունի ու հետեւաբար՝ անհնար է գերեզմանօրինէք մը կատարել անոր ոսկորներուն ի հանգիստ:

Բայց հոգ չէ: Իր յիշատակը վառ պահելու համար մենք կրնանք ուխտի այցելութեան մը ձեռնարկել դէպի Հայ Գրականութեան մեծ պարտեզը, ուր ամենէն բարձրադիր ածուներէն մին յատկացուած է Վարուժանին...:

Մտնե՛ք ուրեմն այդ ածուէն ներս:

(Շարունակելի - 1)

### ՏԱՐԱՆՁԱՏ...

Սկիզբ՝ էջ 5

Մշակութային առումով Մետրոպէան ուղղագրութեան վերականգնումը Հայաստանի մէջ, կ'ըլլայ մշակութային այն ամրակուռ, հիմնական կամուրջը, որ աշխարհատարած Սփիւռքը իր արհեստարհագար ու մէկ երակներով կը կապէ Հայաստանին, եւ փոխադարձաբար: Հայաստանի մէջ հրատարակուող մանկական գիրքերը, գրականութիւնը այլեւս ուղղագրութեան պատճառով «անհասկնալի» կամ «անհասանելի» չի նկատուիր, Սփիւռքի հրատարակչատուներուն արտադրանքը հեզաստահ օգտագործելի կ'ըլլայ հայրենի բնակչութեան

համար, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ հասակ առնող պատանիներն ու երիտասարդները դիւրութեամբ կը հաղորդակցին իրարու հետ, հայ մշակոյթի իրազագեղ հարստութեան հետ: Արեւմտահայերէնի գարգացումը անելի ապահով կը դառնայ, արեւելահայ երիտասարդը իր սերը կ'երգէ Վահան Թեքեանով եւ Վազգէն Շուշանեանով, սփիւռքահայ մամուլը մուտք կը գործէ Հայաստան: Հայրենիքը կը ցնծայ եւ կը հանդիսանայ Հայ Մշակոյթի կեդրոնը: ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԵՍ ԱՄԲՈՋՅԱԿԱՆ Կ'ըլլայ:

Վերջապէս փուլ պէտք չէ՞ գայ լեզուական այն կեղծ պարիսպը, որ միտումնաւոր բարձրացուեցաւ Հայաստանի Առաջին անկախութեան անկումէն ետք, հայութեան երկու հատուածներուն միջեւ անջրպետ առաջացնելու նպատակով: Դեռ մինչեւ Ե՞րբ ուղղագրութեամբ բաժնուած պիտի ըլլանք: Մեր միասնականութեան հիմքը մեր մշակոյթը չէ՞, ուրեմն...:

օօօ

### Մշակոյթը Գաղափարական Միասնութեան Հիմք Օրինակելի Անցալ

Անցեալին երեք կայսրութիւններու մէջ տարածուած ըլլալով մէկտեղ, ժամանակը եւ սահմանները չկրցան մեզ բաժնել իրարմէ: Ինչո՞ւ: Մտածած ենք պատասխանի մասին: Ո՛չ Սուլթանները, ոչ ալ ցարերը կրցան կասեցնել ձեռք-ձեռքի տալու եւ միմիանց օգնութեան հասնելու մեր ձգտումն ու ընթացքը: Ռուսահայաստանէն ԵՐԿԻՐ արշաւեցին խումբերով՝ պաշտպանելու հայը, որ կը կոտորուէր իր սուրբ հողին վրայ: Թիֆլիսէն ու Արցախէն հայ մեծ քաղաքական գործիչներ կազմակերպեցին Սասունն ու Վանը եւ այնքան հարագատ դարձան տեղաբնիկներուն, որ անոնք գիրքնք Վանեցի կնքեցին (Շուշի ծնած Մերգեյը-Արամը անուանակոչուեցաւ Վանի Արամ): Միասնութեան հիմքը մշակոյթն էր, որովհետեւ բոլորը Ռաֆֆիի շունչով մեծցած էին:

Մալխասի «Չարթօնք» վէպին մէջ լաւապէս պատկերուած է ազատագրական պայքարի հունին մէջ աշխարհագրական տարբեր շրջաններէ հայերու քով-քովի գալու պատկերը, որ կենսաբ կը ստանայ եւ կ'անձնաւորուի Վահէին եւ Վարդանին տիպարներուն եւ Ազիւթ Գեւորջի հեքիաթանման կռիւներու պատմութիւններուն ընդմէջէն: Գաղափարական միասնութիւն յանուն վե՛հ նպատակի: Օր մը «Չարթօնք»ը պիտի դառնայ՝ Հայաստանէն ներս ամենաշատ ընթացուած գիրքերու ցանկին առաջինը: Այս վէպը, որ սերունդներ դաստիարակած է Սփիւռքի տարածքին, հիանալի կերպով կ'արտացոլէ հայութեան երկու հատուածներուն միածոյլ միասնութիւնը, միասնութիւն, որ ունեւիք եւ որուն պէտք է ձգտինք:

օօօ

Այնքան ատեն որ աշխարհագրականօրէն ցրուած ենք, պէտք է ամէն ջանք գործադրենք, որ մշակութային (ու նաեւ կրթական եւ

գիտական) հասարակաց յենարանի վրայ համախմբուած եւ անկոտրում կերպով միասնական ըլլանք, միասնակամ տեսլականներով, առաւելագոյնս օգտագործելով ներկայ դարու արհեստագիտութեան բարիքները:

### ԲԱՅԱՌԵԼՈՒ...

Սկիզբ՝ էջ 5

արագակշռոյթ քայլերը:

Քաղաքական իրատեսութեամբ եթէ այս համապատկերը տեսանելի է թէ՛ բովանդակութեամբ եւ թէ՛ նուաճելիք փուլերով, ուրեմն լիբանանեան հասարակութիւնը պէտք է անցնի այնպիսի ճանապարհային քարտեզէ մը, որ կ'առաջնորդէ դէպի նոր տեսլականը: Այն տեսլականը, որուն մասին առանց գիրար հակասելու կը ձգտին բոլորը: Այնպիսի քարտեզ մը, որմէ հանգրուանային անցումը չանդամալուծէ երկրին բնականոն կեանքը, անելիով չաւագախրէ պետութեան նաւը եւ մանաւանդ չհարուածէ քաղաքացիներու արդէն իսկ ծանրօրէն խոցուած ընկերային-տնտեսական իրավիճակը: Պէտք է բացառել հերթական ինքնահարուածը:

### ՊԱՐՏԵՋԻ...

Սկիզբ՝ էջ 8

կած էր: Բնակարանը տրամադրուեցաւ Խտըշեան ընտանիքին, ի մեծ գոհունակութիւն բոլորին:

Երկու ամսուան աշխատանքով պրն. Խտըշեան յաջողեցաւ բեմ բարձրացնել «Հայաստանի Լեռներու Սրնգահարը», որուն համար ինք ալ շատ տաղանապէս, շրջապատն ալ: Յերեկ-գիշեր ընելիք կար:

Սօտ էր բեմադրութեան թուականը, առիթն օգտուելով առաջարկեցի որ Կիրակի պարտեզ գան: Առաջարկիս ընդառաջեցին գոհունակութեամբ: Ճշդուած օրուան եւ ժամուն եւ եղբօրս տղան գացինք նշանակուած շրջանը, մարդ չգտանք: Բաւական դառնալէ յետոյ

տեսանք պրն. Վարուժանին նմանող մէկը: Շիտակ տեսած էինք. ի վերջոյ տիկինն ալ վար իջաւ եւ հասանք պարտեզ: Բեմադրիչն ու տիկինը շատ հարցումներ ունեին ուղղելիք, թէ ինչպէս գտած էին մեր քաղաքը, գիրքնք հետաքրքրող առաւելաբար Համազգայինի կեդրոնն էր, գործունեութեան վայրը: Ի վերջոյ, տան չորս բոլորը դառնալէ յետոյ, նստանք նախաճաշի: Ճնճուկները կը թռվոյնային օդին մէջ: Ընկ. Վարուժան հարցուց. «Արդե՞ք կարելի՞ է ունենայ իրացան մը, կ'ուզե՞մ որսորդութեան փորձ մը ընել»: Ներսէն բերուեցաւ իր ուզածը, բոլորս կը հետելէինք իր շարժումներուն: Զիչ տք տեսանք, որ փամփուշտը դպած ըլլալով ելեկտրական թելին գետին ձգած էր գայն: Անշուշտ ժպտեցանք, նշանակալից էր դէպքը:

### ՅԱԿՈՒ...

Սկիզբ՝ էջ 4

ժողովներուն նիւթական կարողութիւնները գգալի նահանջ արձանագրած են:

**Հ. - Հայկէպի մէջ վերականգնումի ինչպիսի՞ աշխատանքներ կը տարուին:**

**Յ.Բ.** - Քաղաքին մէջ կան շրջաններ, գորս պետութիւնը կը վերանորոգէ, մանաւանդ Հայկէպի հին շրջանները, հին շուկաները, որոնք մէկ մասին բացումն իսկ տեղի ունեցաւ նախորդ քաղաք: Տակաւին կան մեծ թիւով կառուցներ, շէնքեր որոնք փլատակ վիճակի մէջ են: Այսինքն վերականգնումի հիմնական աշխատանքը տակաւին չէ սկսած: Հիմնական վերականգնումը կը պահանջէ միջազգային ճիգ եւ ներդրում:

**Հ. - Իսկ պետութիւնը ի վիճակի՞ է ամբողջական եւ համակարգուած կերպով յառաջ տանիլ այդ աշխատանքը:**

**Յ.Բ.** - Այո, եթէ նիւթական արհիւրներ ապահովուած ըլլան եւ յըստակ ծրագիր ըլլայ, պետութիւնը դիրաւ կը յաջողցնէ վերականգնումը:

**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

**Խմբագիր՝ Չարմիկ Զիւլքոչեան-Պողիկեան**  
**Սրբագրիչներ՝ Չեփիւռ Պապիկեան-Աւագեան**  
**Յուշիկ Ղազարեան**  
**Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան**  
**Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան**  
**Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան**  
**Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան**  
**Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլքոչեան**  
**Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեան**

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:  
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:  
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:  
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:  
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ռաֆֆի Միլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ տողոց պասքեթի նախագահի բաժակի Հալեպի խմբաւորման երկրորդ փուլի մրցումներուն, ՀԱԸՄ-ի տողոց խումբը արձանագրեց իր երկրորդ պարտութիւնը, այս անգամ ճալաա-ի կազմէն՝ 65-41 արդիւնքով:



-Հոմսի Ռասապէ ակումբի վարչութիւնը, պաշտօնապէս յայտարարեց, որ ակումբը իր մասնակցութիւնը պիտի չբերէ Սուրիոյ պասքեթի 2019-2020 տարեշրջանի մրցաշարքերուն, Պասքեթի դաշնութեան ակումբին հանդէպ ցուցաբերած անտարբեր եւ անարդար մօտեցումին համար:

- Դամասկոսի Ճէյշ խումբի վարչութիւնը պաշտօնագրով ըրաւ ֆութպոլի խումբի մարզիչ Թարեք ճապպանը, անոր փոխարինելով Ռաաֆաթ Մուհամմէտը:

- 5-10 Դեկտեմբեր 2019-ին, Դամասկոսի մէջ տեղի պիտի ունենայ արեւմտեան Ասիոյ պատանի աղջկանց հաւաքականներու մրցաշարքը:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ԱՐՄԵՆ ՄԵԼԻՔԵԱՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Հունգարիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունենալիք յունահռոմէական ոճի ըմբշամարտի ասարտին, Հայաստանի հաւաքականի անդամ Արմէն Մելիքեան (60 քկ.) արժանացաւ ոսկի մետալի:



Եգրափակիչ մրցումին, Հայաստանի ներկայացուցիչը 11-7 արդիւնքով յաղթեց խրիւր-գիստանի ներկայացուցիչ Ժուլաման Շարշենփեկովին: Արմէն Մելիքեան եգրափակիչի ճամբուն յաղթած էր պուլկարացի Մարթին Վելեւին (8-0), իրանցի Մեհտի Մուհամմէտին (4-0) ու

հունգարացի Կրիստիան Կեչսկեմետիին (5-0): Հայաստանի երկրորդ ներկայացուցիչը՝ Արման Վարդումեան (82 քկ.) 3 Նոյեմբերին բարձրորակ մակարդակի խաղարկութեամբ, 10-6 հաշիւով, յաղթեց Թուրքմենստանի ներկայացուցիչ Տոյլի Օրագովին, իսկ պրոնզէ մետալին համար պարտութեան մատուցեցաւ Խազախստանցի Եւգէի Պոլիվարովին՝ 7-16:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՐՍԵԼՈՒԱՆ ՆԿԱՏԱՌԵԼԻ ԱՐԴԻՆՔՈՎ ՉԻՋԵՑԱՄ ԼԵՎԱՆԹԻՆ

Սպանիոյ ախոյեանութեան 12-րդ փուլի մրցումներուն, ախոյեան Պարսելոնան 3-1 արդիւնքով պարտութեան մատուցեցաւ Լեվանթին, արձանագրելով այս տարեշրջանի իր երրորդ պարտութիւնը:



Հանդիպումի 38-րդ վայրկեանին, Քաթալոնիական խումբին միակ կողմ տուգանային հարուածով նշանակեց Լիոնել Մեսսին: Երկրորդ կիսախաղին հիւրընկալ խումբը եօթը վայրկեանուան մէջ կրցաւ տիրապետել խաղարկութեան նշանակելով երեք կոլ՝ 61 - 63 - 68-րդ վայրկեաններուն: Մայրաքաղաքի թագաւորական ակումբը՝ Ռեալ Մատրիտը իր դաշտին վրայ բաւարարուցեցաւ մէկ կէտով եւ 0 - 0 հաւասարութեամբ անարտեց Ռեալ Պեթիսի հետ կատարած հանդիպումը: Աւելցնենք, որ սոյն արդիւնքներով Պարսելոնան եւ Ռեալ Մատրիտը 22 կէտով գրաւեցին աղիւսակին առաջին դիրքը:

### ՊԱՅԵՐՆ ՄԻՈՒՆԵՆ ՊԱՇՏՈՆԱԶՈՒՐԿ ԸՐԱՄ ԻՐ ՄԱՐԶԻՉԸ

Կիրակի օր, Գերմանիոյ բազմակի ախոյեան Պայերն Միունխի վարչակազմը պաշտօնագրով ըրաւ խումբի երուաթ մարզիչ Նիքո Զոլվաթը: Այս որոշումին գլխաւոր պատճառն էր ախոյեան խումբին վերջին ձախողութիւնը, որ 5-1 արդիւնքով զիջեցաւ Ինթերնալին ֆրանքֆորթ խումբին: պաշտօնական յայտարարութեան մէջ յիշուցեցաւ, որ ակումբի նախագահն ու մարզական տնօրէնը փակ նիստ մը գումարած են խրուաթ մարզիչին հետ, որուն անարտին առած են այս որոշումը:



Աւելցնենք, որ Զոլվաթ 2018-ի ամրան ստանձնեց Պայերն Միունխի մարզիչութեան պաշտօնը, որուն հետ տիրացաւ Գերմանիոյ ախոյեանութեան, նախագահի եւ Սուփըրի բաժակներուն: Ներկայիս Պայերն կը գրաւէ Պոնտեւ Լիկայի ախոյեանութեան աղիւսակին 4-րդ հորիզոնականը: Խումբը իր կատարած տասը մրցումներուն ընթացքին արձանագրեց հինգ յաղթանակ, երեք հաւասարութիւն եւ երկու պարտութիւն կրեց:

### ԱՆՏՐԵ ԿՈՄԵՉ ՎԻՐԱՊՈՐՈՒԵՑԱՄ

Անգլիոյ ախոյեանութիւնը իր 11-րդ փուլին ցաւալի դէպք մը արձանագրեց երկիրին մարզական պատմութեան մէջ: Դէպքի կողմերն էին Թոթենհեմ խումբի քորեացի խաղացող Սոն Հոնքը եւ Իվերթոնի փորթուկալցի խաղացող Անտրէ Կոմեթը: Հանդիպումին, երբ Կոմեթ գրնդակը առած կ'ուղղուէր դէպի մրցակիցին դարպասը, Սոն ուզեց դարձնել յարձակումը, բայց անոր կոպիտ խաղարկութեան պատճառով փորթուկալցի խաղացողը վիրաւորուցաւ, որուն հետեւանքով ալ ան կրնայ ֆութպոլի դաշտերէն առնալետ հեռանալ: Աւելցնենք, որ Սոն չկրցաւ զսպել իր արցունքը եւ ազդուցեցաւ Կոմեթի վիճակէն:



ԵՐԿՐՈՒՆԵՐՈՒ	ԵՐԵՐԵՐՈՒ	ՉՈՐԵՐԵՐՈՒ	ՀԻՆԱՇԵՐՈՒ	ՈՐՐԵԱՐ	ՇՐՔԱՐ	ԿԻՐԱԿԻ
11/11	12/11	13/11	14/11	15/11	16/11	17/11
11° 24°	11° 24°	11° 24°	12° 24°	10° 23°	9° 22°	8° 22°



## ԿԱՏԱԽՈՐ, ԾԱՌԱՅՈՂ...

Մկրտչի Էջ 1

Հրջաններուն մէջ երիտասարդական միութիւնն հիմնելու առաջարկը երկրորդող ընկերներուն ստորագրութիւնները դրոշմուած էին:

Հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Ընկ. Մարիա Նալպանտեան: Ան ըսաւ, որ ՍԵՄ-ը կը միտի պատրաստել ազգային գիտակցութեամբ լիցքաւորուած երիտասարդներ, ունենալ Հայ Դատին ու հայ ժողովուրդի պահանջատիրութեան պաշտպան ու պահապան նուիրեալ զինուորներ:

Արաբերէն բացման խօսք արտասանեց ընկ. Հրակ Փայասեան: Ան հաստատեց, որ մենք՝ երիտասարդներս, ամրակուռ շարքերով, հաւատքով ու աշխատանքով պիտի նուիրուինք Հայ Դատին: Հանդիսութեան բացումը կատարուեցաւ թատերական պատկերով մը, որ կը ներկայացնէր ՍԵՄ-ի հիմնադրութեան պատմութիւնը: Ապա ելոյթ ունեցաւ ՍԵՄ-ի նուագախումբը, հրամցնելով «Ախպերս ու Ես», «Մարտիկի Երգը», «Ղարաբաղ» (մենակատար ընկ. Յովիկ Պարսումեան): Ծարունակուեցաւ ներկայացումը՝ ՍԵՄ-ի մասնաճիւղերուն 40-ամեայ գործունէութեան յիշատակումով:

Իրենց ճիգերով ու հեւըռտ աշխատանքով ՍԵՄ-ականներ պարախումբ ալ կազմած էին: Պարախումբը ներկայացուց «Բերդ» եւ «Եարխուշտա» պարերը, իսկ ընկ. Կասիա Պաղտիկեան առաջին անգամ ըլլալով մեկնաբանեց ՍԵՄ-ի 40-ամեակին նուիրուած «ՍԵՄ-ականներ» երգը, որմէ ետք բեմ հրաւիրուեցան ընկ. Աննա Պարսամեան, ընկ. Բեկի Չատիկեան եւ ընկ. Վիգէն Չաղլասեան ասմունքելու ազգային-յեղափոխական գրականութենէն քաղուած ընտրանի մը:

Օրուան ուղերձը արտասանեց ընկ. Քրիստ Խոռոյեան, յիշելով որ ՍԵՄ-ականը առաւօտուն դպրոցական գրասեղաններու ետին, համալսարանական լսարաններու մէջ գիտութիւն կ'ամբարբեր, նոյն այդ երիտասարդը քանի մը ժամ ետք, պատերազմական ծանր օրերուն հրդեհ կը շիջաներ, վիրաւորներ կը փոխադրէր, նպաստ կը բաշխէր, Հայ Ծերանոցի ծերունիները ապահով վայր կը տեղափոխէր: Իսկ գիշերները պահակութիւն կ'ընէր, վճռած էր իր կեանքին գնով պաշտպանել մեր ժողովուրդը, մեր սրբազոյն կառոյցները՝ եկեղեցի, դպրոց, ակումբ...: Պատերազմի տարիները խլեցին երիտասարդին խանդավառութիւնը, բայց յուսահատութեան չմատնեցին զինք: Այդ յոյսն էր, որ վերաբնկեցաւ եւ շրջան մը վերջ ծիածանը տա-

րածուեցաւ Հայէպի երկակամարին վրայ՝ խաղաղութիւն ատետելով բոլորին: Միութիւնը իր նախկին եռանդը վերագտաւ: Վրանները վերստին լարուեցան Զեսապի մէջ, թէ այլուր, բանակումի փողը հնչեց ու մեր դրօշները կրկին ծածանեցան հայրենական տարածք դարձած մեր բանակավայրերու կայմերուն վրայ: Տարիները կը թաւալին եւ ՍԵՄ-ը կը շարունակէ նոր ուժեր հասցնել: Ուժեր, որոնք Սփիւռքի մէջ մաքառելով մեկտեղ, իրենց աչքերը սեւեռած կը պահեն ձիւնածածկ գագաթներուն եւ կը սպասեն, որ հայ հերոսներուն բազումները այնտեղ կրկին եռագոյնը ծածանեցնեն:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ: Ընկ. Մարիա Չիչեան մեներգեց «Առաքիւնի Ընկեր»ը:

Աւարտին ՍԵՄ-ի երգչախումբը, տիկ. Գայիանէ Սիմոնեան -Տրեանի գեղ. ղեկավարութեամբ, ներկայացուց «Վերցրուք Տղերք Հրացան», «Խնուսից Գալով», «Մշոյ Դաշտեր», «Ախ Ֆիտայիք», «Դեռ Զարկէք», «Գարեգին Նժդեհի Յիշատակին», «Հպարտ Անպարտ Դաշնակցութիւն», «Փառք Զեզ, Ով ՍԵՄ» երգերը, երգեհոնի նուագակցութեամբ ընկեր Արմէն Ասայեանի:

Հանդիսավայր ընկի. Ժագի Մահտերեճեան հանդիսականներուն ծափողջոյններուն ներքեւ, մէկ ան մէկ բեմ հրաւիրեց նախ երգչախումբի ղեկավարը, ապա պարախումբի պարուսոյցը՝ պրն. Յարութ Պարոնեանը, թատրոնի քնարանի հեղինակը՝ ընկ. Յուշիկ Ղազարեանն ու թատերական ներկայացման բեմադրիչը՝ պրն. Գեորգ Արոյեանը:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեորգ Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպունեան: Սրբազանը գնահատելով երիտասարդներուն ինքնաշխատութեամբ պատրաստուած գունդը եւ իմաստալից յայտագիրը ըսաւ. «ՍԵՄ-ը ոչ միայն պար, երգ եւ ասմունք կ'ուսուցանէ, այլեւ հայ երիտասարդին նկարագիրը կը կերտէ՝ հաւաքական աշխատանքին ու դաստիարակչական իր ծրագրին ընդմէջէն: Մեր ժողովուրդը այսպէս կ'ընկալէ ՍԵՄ-ը: Իւրաքանչիւր ՍԵՄ-ական սուրիահայրութեան հպարտութիւնն է: Այս երիտասարդներուն վստահուած է մեր համայնքին ապագան: Այսօր, այս բեմին վրայ յոյս տեսանք, ուժ տեսանք, ապրում եւ կազմակերպուած աշխատանք տեսանք, փոխադարձ յարգանք ու գործակցութեան օրինակ տեսանք, պայքարի ոգի տեսանք: Կեցցէ՛ք, սիրելի ՍԵՄ-ականներ»:

Հանդիսութիւնը ավարտին հասաւ սրբազան հօր «Պահպանիչ» արօթքով:

